



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



06 DEC 2010

891.85-

Պ-72

II ՅԱԿԵԼՈՒԱԾ ՅՈՒՇԱՐԱՐՀԻ

ԿՄ.

✓ 8919

# ԵՐԵՎԱՆԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1002  
5486

Դրամա և բեր գործողութեամբ

Հեղինակ՝ Ս. ՊԵՏՐՈՎԻԿԻ  
Թարգմանիչ՝ ՍԻՄ. ՇԽԵԱՆՑ



Թ. Ի Ֆ Լ Ի Ս  
Էլեքտրաշարժ տպարան. «Հերմես» Ընկ. Մադաթ. փող. № 5.  
1907 (245)

22 JUL 2013

16058

## ԳՐԱԴԱՎՈՒԹԻՒՆ

### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Ելենա  
Օլգա  
Միհրան  
Զարսկի

Մի մեծ սենեակ, որի գլխաւոր դուռը տանում է գէպի նախասենեակը: Զալը դուռ գէպի հարեւան սենեակը, աղ պատուհան: Արան կից մի գրասեղան, որի արկղերը կիսով չափ դուրս են հանուած: Սեղանի վրայ անկարգ թափթփուած են նամակներ, թղթեր, ծրաբներ: Այրուամ է մի մեծ լամպ: Աղօտ լոյս: Լուսանում է:

### 1) ԵԼԵՆԱ ԵՒ ՄԼԻՑԿԻ

ԵԼԵՆԱ...—("Կատած է զրասեղանի մօտ. նամակներ է մէկը միւսի ետք կարդում, ապա զգուանքով դէն զցում. բարձրանում է տեղից եւ մոլորուած աջքերով նայում դէպի տարածութիւնը: Լսում է՝ ինչպէս նախասենեակի դռները բացւում են, յետոյ աղմուկով փակւում: 'Ելենան ցնցւում է. զնում է պատուհանի մօտ եւ ճակատը ապակու վրայ թեքում:

ՄԼԻՑԿԻ.—("Ներս է զալիս մոտակոն դէմքով, կանգ առնում, անհանգիստ աջքերով չափում Ելենային. ապա ծօտենում է զրասեղանին, Թղթերն ու նամակները խառնիխտուն նետում արկղերի մէջ եւ կողպում: Վերցնում է մի ծիախսոտ, դանդաղ վառում, աթոռի վրայ նստում: Մի րոպէ լրութիւնց յետոյ յունած ձայնով): 'Ի՞՞և ես իմ գրասեղանը բացել:

ԵԼԵՆԱ.—(Դանդաղ դառնում է դէպի Մլիցկին. կանգ է առնում մի վայրկեան. մէջքը դարձրած դէպի պատուհանը՝ ծիծաղում է խդուած, խրպակու ծիծաղով): Այս: Գուցէ, այդ քեզ հաճելի չէ:

ՄԼԻՑԿԻ.—Ի՞նչո՞ւ ես բաց արել:  
ԵԼԵՆԱ.—("Նայում է նրան արհամարհանքով եւ լոռում):  
ՄԼԻՑԿԻ.—("Զայրացած): Ի՞նչո՞ւ հաճար ես բաց արել:  
ԵԼԵՆԱ.—("Հեղնութեամբ ծիծաղում է): Որովհետև կամենում էի իմանալ այն տիկնոջ նամակների բովանդակութիւնը, այն տիկնոջ որի մասին այնքան լսել եմ: Համաձայնիք, որ դա ինձ համար շատ կարեար է: (Աջքերը յառած նայում է նրան): Կարծում ես չզիտե՞մ, որ դու արդէն մի քանի շաբաթ է՝ ինչ ինձ խարում ես: Ո՞րտեղ ես անցկացնում բոլոր երեկոները: Խմբագրական ժողովը ներում. հա-հա-հա-հա-

ՄԼԻՑԿԻ.—(Զայրացած): Կարող էիր մի քիչ սպասել: Այսօր առանց դրան էլ ամեն ինչ կիմանայիր: (Յոյց է տալիս զրասեղանը) ԵԼԵՆԱ.՝ Կիմանայի՞ր: Քեզանի՞ց: Քեզանի՞ց: Եթէ Զջարսկին պատահաբար բերնից խօսք չթողնէր, ես ոչինչ չէի իմանալ: Ամաչիր, ամաչիր: Որքան ստոր բանէ այդ: Դու վճռել ես մի քանի շաբաթից յետոյ նրան այն տիբուհու հետ պատկուել, իսկ ինձ ոչ մի խօսք... Վախեցմբ...

ՄԼԻՑԿԻ.—(Կեղծ հանգստութեամբ ման է զալիս սենեակում): Դէ լուս: Ինձ շատ հաճելի է, որ ամեն ինչ գիտես և ինձ ազատել ես երկար բացատրութիւններից... (Երկարացնելով)... Ես բացատրութիւնները սաստիկ ատում եմ...

ԵԼԵՆԱ.՝ (Սւելի ու աւելի զայրանալով): Որովհետեւ դու մի չնչին թուլամորթ երկշու ես: (Աղաղակում է): Ինչո՞ւ էիր խաղում այդ անպէտք, չնշին կոմեղիան: Դու հետեւել ես իմ ամեն մի քայլին. կամնել ես մի յարմար րոպէ գտնել, որպէս զի բացատրուես: Հա-հա-հա: Յարմար առիթ ես որոնել, որ ինձ բոլորն ասես, սա-կայն քաջութիւն չես ունեցել... քաջութիւն չես ունեցել ասելու քո նախկին սիրածին՝ «Ես մի ուրիշի եմ սիրում»: Եւ դու ստել ես, ստել ես շարունակ: Օ՛հ. Ինչպէս ստորաբար ես ստել:

ՄԼԻՑԿԻ.—(Հանգստութիւնը կորցնելով): Թռղղայդ, ինդրում եմ քեզ: Ինձ համար բաւական են քո բարեկամական նկատողութիւնները: Յանդիմանութիւններն անտեղի են: Դու պէտք է ին-ձանից շնորհակալ լինես, որ քեզ այդքան երկար պահպանել, ազատել եմ անախորժութիւններից... Կը նշանակէ՝ դու արդէն գիտես, որ մենք իրարից պիտի բաժանուենք:

ԵԼԵՆԱ.՝ (Կատաղած): Բաժանուել... Բաժանուել... Հա-հա-հա... Ո՞չ, ոչ, իմ թանկագինս. այդպէս շուտ անկարելի է բա-ժանուել: Դու ծծել ես իմ արինը, պոկել-հանել ես իմ սրտից ամեն ինչ: Իսկ այժմ կամնում ես ինձ վնատիլ... Ես քեզ տուել եմ ամեն ինչ, որ կարող է տալ կինը... Քո պատճառով փախել եմ ծնողներիս մօտից, քո պատճառով ինձ մարդիկ մատով էին ցոյց տալիս... Իսկ այժմ, այժմ մենք պիտի իրարից բաժանուենք: Հա-հա-հա... Ես կը սողամ քո հանից՝ որպէս մի շուն, ես ոչ մի բոպէ քեզ հանգստութիւն չեմ տալ... (Լաց է լինում)... Օ՛հ, Աս-տուած իմ, Աստուած...

ՄԼԻՑԿԻ.—Ի հարկէ որ այդպէս մենք իրար չենք հասկանալ: Հարկաւոր է, վերջապէս, որ դու այս բանին հանգստութեամբ նայես: Ես սիրում եմ մի ուրիշին: Ես երկար կոռւել եմ այդ

զգացման դէմ, որովհետեւ չէի կամենում քեզ անբախտացնել: Բայց չդիմացայ, որովհետեւ չկարողացայ ընդդիմանալ: Կան զգա-ցումներ, որոնց վերաբերմամբ պարտականութիւն, պարտը և այլ դրանց նման բաներ դատարկ Փրազներ են: Վերջապէս, որքան ձանաչում եմ քեզ, դու չես կամենալ, որ քեզ հետ մնամ միմիայն ըստ պարտականութեան... Խիստ կասկածելի է, որ համաձայնուէիր ապրել մի մարդու հետ, որ իր ամբողջ կեանքի ընթացքում քեզ պիտի համարէ մի քար, մի քեռ իր շնքին ծանրացած, մի խո-չընդու իր երջանկութեան:

ԵԼԵՆԱ.՝ (Արագութեամբ նրան ընդհատելով): Ես շնքիդ ծանրա-ցած մի քար: Ե՞ս... Իսկ դու ինչ դառար ինձ համար: Գրեթէ մի մանուկ էի, երբ ինձ գրախոտ խոստացար, եթէ համաձայնուեմ մի մանուկ էի, երբ ինձ գրախոտ խոստացար, եթէ համաձայնուեմ մի մանուկ էի, իսկ այժմ շնքի քարը: Ես խոշնդո՞տ քո երջանկու-քոնը լինել. Իսկ այժմ շնքի քարը: Ես խոշնդո՞տ քո երջանկու-քեանը: Իսկ դու ի՞նչ ես ինձ համար: Ի՞նչ... Ի՞նչ կը լինի ինձ... Ուր է այն գրախոտը... հա-հա-հա... այն յաւիտենական երանու-թիւնը, որով դու հրապուրում էիր ինձ:

ՄԼԻՑԿԻ.—Հանգստացիր: Քո կշտամբանքներն անարդար են: Զէ որ դու իմ ետեւից հկար ոչ այն պատճառով, որ քեզ գրախոտ եմ խոստացել, այլ որովհետեւ ինձ սիրում էիր: Կը նշանակէ՝ քեզ հրապուրել է այն անյայտ վայելքը և ոչ սէրը, այժմ...

ԵԼԵՆԱ.՝ (Մոլորուած աջերով նայում է դէպի տարածութիւնը):

ՄԼԻՑԿԻ.—Կը նշանակէ՝ եթէ դու գիտենայիր, որ ինձ մօտ քեզ անբախտութիւն է սպասում...

ԵԼԵՆԱ.՝ Այս, անբախտութիւն, միայն քեզ... քեզ հետ... ոչ նրա համար, որ դու, երեք տարի անցնելուց յետոյ, կարողանա-լինձ թողնել ուրիշի՝ այն տիկնոջ պատճառով: (Յանկարծ հանգըս-տութեամբ): Վերջապէս ինչո՞ւ համար են այս երկար խօսակցու-թիւնները... Զէ որ դու աղատ ես. ոչ մի բանով չես կապուած: Ինձ չես սիրում, դէ գնա, գնա ուր կամենում ես, գնա նրա մօտ. գնա:

ՄԼԻՑԿԻ.—(Նստում է նրա մօտ, ծանր եւ սիրալիր): Լսիր, Հելա, խօսենք խոհեմութեամբ:

ԵԼԵՆԱ.՝ (Ուժգնութեամբ տեղից ցատկում է): Թռղղայդ, էլ ի՞նչ ես ուղում: Վախենում ես իմ մասին...

ՄԼԻՑԿԻ.—Այս. Ես այնքան եմ քեզ հետ կապուած, քեզ նուիրուած, որ չեմ կարող այդ նկատմամբ անտարբեր լինել:

ԵԼԵՆԱ.՝ Կապուած, կապուած: Հա-հա-հա: Գուցէ կամենում ես այն բոլոր վայելքների համար ինձ շնորհակալութիւն յայտ-

ՆԵՐ: Գուցէ կամենում ես նրանց փոխարէնն ինձ վճարե՞լ: (Վայրինի հեգնութեամբ): Գիտե՞ս ի՞նչ: Ամեն բան հրաշալի կերպով կը կարգաւորուի. դու ինձ որևէ մէկին մարդու կըտամ:

**ՄԼԻՑԿԻ.**—(կատաղութիւնը զսպելով): Դու ստո՞ր ես:

**ԵԼԵՆԱ.**—Դու, դու ես ստոր: Ինչո՞ւ ինձ վերցրիր: Ինչո՞ւ համար էիր ստում ամբողջ չորս տարի, ասելով թէ սիրում ես ինձ: (Սաստիկ զայրացած): Իմ սիրոյ համար գու ինձ վճարում էիր... Վճարում էիր նրանով, որ ինձ կերակրում, հազցնում էիր... Աստուած իմ, Աստուած իմ: Որքան զգուելի և նողկալի է այդ: (Տեղից ցատկելով): Ի՞նչ ես կամենում, ի՞նչ... Քեզ համար արդեօք երկնքի բոլոր բարիքները չցանկանամ. Համբուրեմ քեզ արդեօք ասելով՝ «Դնա, Ստեփան ջան, գնա մի այլ երջանկութիւն փնտռիր քեզ համար»...

**ՄԼԻՑԿԻ.**—(Երկա՛րնայումէ նրան իւ կարծ ծիծաղում): All right\*. Դա շատ լաւ էր ասուած: Դէ լաւ. շարունակենք խաղաղ և երշանիկ մեր համերաշխ կեանքը: Լաւ գիտես, որ քեզ չեմ թողնիլ, մինչեւ որ չապահովեմ քո ապագան... Միայն թէ չէի կարծում, որ սիրտ այդքան կոպիտ զգացում ունի:

**ԵԼԵՆԱ.**—(Զայրացած): Դու մի խղճուկ կոմեղիանտ ես: Կամենում ես ասել, թէ մնում ես ինձ հետ այն պատճառով, որ ես եմ քեզ հարկադրում: Հա...

**ՄԼԻՑԿԻ.**—Եւ ես հէնց այդ ասացի:

**ԵԼԵՆԱ.**—(Շուարուած նայում է նրան): Ե՞ս եմ ուզում քեզ ստիպել... Ե՞ս...

**ՄԼԻՑԿԻ.**—Ի հարկէ: Քանի որ ասում ես՝ ես չեմ ցանկանում քո օգնութիւնը, դա կը նշանակէ՝ «Ես կը ծանրանամ քո խղճի վրայ»:

**ԵԼԵՆԱ.**—Խղճիդ վրայ...

**ՄԼԻՑԿԻ.**—Ի հարկէ, առանց իմ օգնութեան դու կորած ես:

**ԵԼԵՆԱ.**—Իսկ քո ի՞նչ գործն է այդ... Թող կորչեմ: Թող ճաշշակեմ այն հաճոյքը, այն գրախար, որ դու ես խոստացել ինձ:

**ՄԼԻՑԿԻ.**—Կամենում ես նահատակի պսակ կըել... Զէ, թանկագինս: Մտածիր միայն, թէ որքան զգուելի բան է բերանի ճամոն գառնալ այնպիսի կանանց և աղջկանց, որոնք աշխատում են հաւասարութիւն ձեռք բերել: Բոլոր լինդիր-դիմումների մէջ

պիտի մատնացոյց լինեն մեր կապի վրայ...: ՀԷ-հէ... Նա պսակուել է, իսկ նրա թողած կինը՝ կորստեան ենթարկուել:

**ԵԼԵՆԱ.**—Օ՞չ, որքան վատ ես. որքան ստոր ես: (Լաց լինելով՝ ընկնում է սովայի վրայ):

**ՄԼԻՑԿԻ.**—(Զայրացած): Զեմ հասկանում ինչո՞ւ ես լաց լինում: Կամենում եմ հեռանալ՝ լաց ես լինում. կամենում եմ մնալ՝ դարձեալ լաց ես լինում: Զլուած, գրաւիչ ածականներ ես ինձ նետում: Ամբողջ մեր խօսակցութիւնը վիրաւորանքներից է կազմուած միայն. ընդմիջումները դու լացով ես լցնում: Ասա ինձ, ինդքեմ, լաւ չէ արդեօք, որ այս մասին աւելի կանուխ չես իմացել: Այս բոլոր տեսարանները կը կրկնուէին անշուշտ մի քանի շաբաթներ շարունակ: Իսկ դա այնքան էլ մարսելի չէ:

**ԵԼԵՆԱ.**—(Տեղից գեր է կենում եւ զնում է դէպի զնները):

**ՄԼԻՑԿԻ.**—Այդպէս. մի անգամից վերջացնենք... Ես մնում եմ քեզ հետ: Մեզ երկուսիս համար շատ լաւ կը լինի: (Հեղօրէն ժպտում է): Այս, այս. լաւ կը լինի, շատ լաւ կը լինի... (Դուռը ծեծում են: Ելենան դորս է զնում):

**ՄԼԻՑԿԻ.**—Ներս եկէք:

## 2) ՄԼԻՑԿԻ ԵՒ ԶԶԱՐՍԿԻ

**ԶՅԱՐՍԿԻ.**—(Ներս է մտնում, հազնուած է անփոյթ. շարժուսները անհանգիստ): Բարեկ քեզ:

**ՄԼԻՑԿԻ.**—Ո՞րտեղից ես գալիս:

**ԶՅԱՐՍԿԻ.**—Ինձ մի անախորժ բան է պատահել:

**ՄԼԻՑԿԻ.**—Ի՞նչ է եղել:

**ԶՅԱՐՍԿԻ.**—Դոնապահին հրամայել են հիւրանոց չթողնել ինձ, մինչեւ որ չկամեր իմ հաշիւը:

**ՄԼԻՑԿԻ.**—Զէ որ այսօր երեկոյեան քեզ մօտ փող կար:

**ԶՅԱՐՍԿԻ.**—Բոլորն էլ թղթախաղում տանու տուեցի:

**ՄԼԻՑԿԻ.**—Կարող ես հանգիստ լինել. ես էլ սաստիկ տանու տուեցի:

**ԶՅԱՐՍԿԻ.**—Կարելի՞ է որ մի քանի օրքեղ մօտ մնամ: Այսօրերս իմ անունով փող պիտի գայ:

**ՄԼԻՑԿԻ.**—Ի հարկէ, տեղ բաւական կը լինի: (Լամպը հանգընում է եւ անհանգիստ կերպով ման գալիս):

**ԶՅԱՐՍԿԻ.**—Դու շատ անհանգիստ ես:

\*.) Շատ լաւ: Ծ. Թ.

ՄԼԻՑԿԻ. — ԵՐԵԿ այստեղ ես եղել:

ԶՉԱՐՍԿԻ. — Այն. բայց քեզ տանը չկոտայ...

ՄԼԻՑԿԻ. — ԵԼԵՆԱՅԻ հետ խօսել ես:

ԶՉԱՐՍԿԻ. — Ի՞նչ արած: Ենթադրում էի, որ նա գիտէ: Պատահաբար յիշեցի Օլգայի մասին, կարծելով որ միմնոյն է՝ նա գիտէ...

ՄԼԻՑԿԻ. — (Ժպտում է): Եւ դու իրօք այդպէս էիր մտածում:

ԶՉԱՐՍԿԻ. — (Ոլորում է ծխախոտը): Այն: Ես ոչ մի կերպ չէի սպասում, թէ կամենում ես աւելի երկար թագցնել այն յարաբերութիւնները, որոնք յայտնի են բոլորին:

ՄԼԻՑԿԻ. — (Ձղայնաբար ծիծաղում է):

ԶՉԱՐՍԿԻ. — Ի՞նչ ես ծիծաղում:

ՄԼԻՑԿԻ. — Չարմանալի բան, որքան միամիտ ես երբեմն:

ԶՉԱՐՍԿԻ. — (Նրա ասած հաստատելով): Այն, այն:

ՄԼԻՑԿԻ. — Հապա, յետոյ ի՞նչ...

ԶՉԱՐՍԿԻ. — Յետոյ՝ ոչինչ: Ելենան, կարծես, կայծակնահար եղաւ: Բայց նա կամքի տէր կին է: Մի բոպէում զսպեց իրեն: Ո՛չ մի բանով ցոյց չտուեց իր վրդովմունքը:

ՄԼԻՑԿԻ. — Այդ քեզ դուք եկաւ... Համար...

ԶՉԱՐՍԿԻ. — Շատ: Ես հասկացայ, որ եթէ դու նրան սիրէիր, եթէ նա քեզ հետ երջանիկ լինէր, այն ժամանակ նա քեզ համար աւելի, քան...

ՄԼԻՑԿԻ. — Հոգերանական գարմանալի հոտառութիւն ունես դու:

ԶՉԱՐՍԿԻ. — Նայած երբ: Բայց, յամենայն դէպս, չէ որ լաւ արեցի, որ նրան նախապատրաստեցի:

ՄԼԻՑԿԻ. — Աւելի լաւ, քան մտածում էիր: (Մի բոպէ լուսնին է տիրում):

ԶՉԱՐՍԿԻ. — Հըմ. և ի՞նչ վճռեցիք:

ՄԼԻՑԿԻ. — Ի՞նչ. հըմ: Մեզանից մէկը պիտի տուժի, կորստեան մատնուի:

ԶՉԱՐՍԿԻ. — Դու կորստեան չես ենթարկուիլ, բայց նա անշնչատ:

ՄԼԻՑԿԻ. — Եւ յետոյ ի՞նչ:

ԶՉԱՐՍԿԻ. — Ես էլ հէնց այդ էի կամենում հարցնել քեզ:

ՄԼԻՑԿԻ. — Ես այստեղ ոչինչ չեմ կարող անել. ոչ մի բան նրան չեմ կարող օգնել: Նա վճռականապէս մերժեց իմ կողման որևէ օգնութիւն:

ԶՉԱՐՍԿԻ. — Հըմ. պարզ է, որ նա, հէնց ինքն այլևս չի կամենում քո սիրուհին, քո հարճը լինել...

ՄԼԻՑԿԻ. — Սիրուհին...

ԶՉԱՐՍԿԻ. — Ինչպէս կանգնում ես՝ անուանիր, բառերի մասին չվիճենք... Հըմ... Զգուելի պատմութիւն է... Եւ իսկապէս ի՞նչ կարելի է պահանջնել քեզանից: Ինչով ես դու մեղաւոր, որ մի ուրիշն ես սիրում... Բայց... բայց... Խղճի հետ ի՞նչ անես, այդ յիմար խղճի հետ, որ ոչ մի կերպ չի ցանկանում ձեռք-ձեռքի տուած քաղաքակրթութեան հետ միասին առաջ ընթանալ:

ՄԼԻՑԿԻ. — Ի՞նչ գործ ունեմ խղճի հետ: Ես երջանկութիւն եմ կամենում, ապրել եմ կամենում: Իսկ այստեղ մնալն ինձ համար կատարեալ մահ է:

ԶՉԱՐՍԿԻ. — Կը նշանակէ՝ դու վճռել ես քո երջանկութեան համար գոհել ելենային:

ՄԼԻՑԿԻ. — Եթէ այլ կերպ չի կարելի...

ԶՉԱՐՍԿԻ. — Սպրելու համար: Սպրելու և երջանկանալու համար: Հէ-հէ-հէ: Իսկ եթէ այդ երջանկութիւնը չարգարացնի քո ակնկալիքները և ոչ մի դրական օգուտ չտանի:

ՄԼԻՑԿԻ. — Այդ էլ կարելի է:

ԶՉԱՐՍԿԻ. — Ես ի նկատի ունեմ մի առանձին դէպք:

ՄԼԻՑԿԻ. — (Հեղուրին ծիծաղում է): Գիտեմ... գիտեմ... Վերջապէս հասար սիրածդ նիւթին: Այսպէս չէ: Հին թէօրիաներ՝ մաքրութեան, արուի բնապեների մասին...

ԶՉԱՐՍԿԻ. — Ինձ այնպէս է թւում, թէ աւելի լաւ կը լինէր, եթէ սիրագ աւելի խորը բննէիր:

ՄԼԻՑԿԻ. — Ինձ համար Օլգան մաքուր և անարատ կը մնայ, թէս արդէն մի ուրիշն է պատկանելիս եղել:

ԶՉԱՐՍԿԻ. — Այդ պարզ է անսականապէս: (Ծիծաղում է): Պարզ՝ որպէս պայծառ օրը: Ինչով է նա մեղաւոր, որ մի որևէ պատահական անհատ քեզ կանխել է, և այդ կինը Մլիցկու գոյութիւնն իմանալոց առաջ իր սիրտը տուել այդ պատահական անձին:

Եւ ի՞նչով է նա մեղաւոր, որ այդ պատահական անձը պահանջել է նրանից ոչ միայն պլատանական սէր, այլ և... հէ-հէ... չէ որ դու գիտես, թէ ի՞նչ են պահանջում աղջիկներից: Վերջապէս այդ աղջիկն ի՞նչով է մեղաւոր, որ անձնատուր է եղել: Նա պիտի անձնատուր լինէր, որովհետև չէ որ սէրն աւելի ուժեղ է՝ քան բանականութիւնը: Ասում են, որ դա նոյն իսկ ցոյց է տալիս բնաւորութեան ոյժը, հոգու համարձակութիւնը, արիս-

տոկրատիզմը, երբ կինը չի սպասում սիրոյ այդ—հէ-հէ—երաշ-խաւորութեան համար օրինական թոյլտութեան... Դէ ասա ինձ, կարելի՞ է արդեօք մի որևէ բան դրանից աւելի խորապէս ըմբռ-նել: Այդպէս, ուրեմն, ես ոչ մի բանի վրայ ուշադրութիւն չեմ դարձնում և պատկռում եմ: Բայց ահա զարթնում է արուն... պարզ, բիրտ արուն, որ հաւասարապէս ուժեղ է թէ գեղջուկի հոգում և թէ բարոյապէս ներբացած մարդու մէջ, ինչպիսին դու ես: Սկսում է երջանկութեան առաջին գործողութիւնը: Զգում ես, որ այն ամենը, ինչ տալիս է կինն առաջին անգամ, ինչպէս և այն ամենը, ինչ կնոջ հոգու մէջ երեան է գալիս, օրինակ՝ նա-խազգացում, տարօրինակ, խորհրդաւոր, երկիւղով և ծարաւով լի յուղմունք, խոռվութիւն,—այդ բոլորը բո կնոջ հոգում արդէն վա-դուց թառամել են. նա արդէն վաղուց մոռացել է այն արբեցուցիչ անմտութիւնը, որով տարուել, անձնատուր է եղել առաջին անգամ... Հէ-հէ-հէ... Նա փորձուած է. գուցէ նոյն իսկ քիչ էլ սառն է... Գի-տես, չէ, որ այդ բոպէներին փորձուած կանանց մէջ զարմանալի դիտողութիւն է զարթնում, իսկ մենք՝ տղամարդիկս ճիշտ հէնց այդ բոպէներին անսահման ծիծաղելի ենք... Հէ-հէ: Սակայն, գուցէ, քեզ համար ախորժելի չէ, որ ես շօշափում եմ այս հարցը:

**Մլիթկի.**—Եւ քեզ թւում է, որ դա կարող է ինձ ստիպել տանջուելու: Հէ-հէ...

**ԶջԱՐՍԿԻ.**—Ո՞չ: Կը նշանակէ՝ դու մի արտասովոր մարդ ես: Քեզ տանջանք չի կարող պատճառել մինչև անգամ այն միտ-քը, որ Օլգան կարող է մայր եղած լինել:

**Մլիթկի.**—(Կատաղութեամբ): Լոիբ:

**ԶջԱՐՍԿԻ.**—Ինչու լոեմ, եթէ քեզ համար մինոյն է դա: (Բարկացիոտ): Ես պահանջում եմ այդ բնագդն այն մարդուց, որի սիրու յարգում եմ: Գեղջուկը կարող է չունենալ այդպիսի բնագդն ա կարող է պատկռել մի կնոջ հետ, որ իր հետ իրրե օժիտ բե-րում է ուրիշից ունեցած երեխաներ: Սակայն քեզ... (Ընդհատումէ):

**Մլիթկի.**—(Նստում է աթոռի վրայ): Բաւակմն է: Եթէ դու պնդում ես, որ ես խոստովանեմ, թէ ինչպէս սաստիկ տանջում եմ զբանից,—համեցէք,—ես կարող եմ այդ հաճոյքը պարզե-ւել քեզ: Բայց մի տանջիլ ինձ այժմ: Դա ոչ մի օգուտ չի բե-րիլ: Ես առանց Օլգայի չեմ կարող ապրել: Իմ մէջ մի բան կայ, որ աւելի ուժեղ է՝ քան բոլոր տանջանքներն ու բնագները: (Չեռքով մի շարժում է զործում): Ես ոչ մի բանի առջև կանգ չեմ առնիլ, քանի որ այլ կերպ անկարելի չ... (Լոռութիւն):

**ԶջԱՐՍԿԻ.**—Իսկ Օլգան ե՞րբ կը վերադառնայ:

**Մլիթկի.**—Ինչու ես հարցնում:

**ԶջԱՐՍԿԻ.**—Աւելի լաւ չէր լինիւ, եթէ մեկնած չլինէր:

**Մլիթկի.**—Ինչու:

**ԶջԱՐՍԿԻ.**—Երբ սիրածդ մարդուն չես տեսնում, քեզ այն-պէս է թւում շարունակ, թէ առանց նրան անկարելի է ապրել:

**Մլիթկի.**—(Տեղից բարձրանում է, յուզուած): Որքան ընկերական կարեցութիւն կայ այսօր քեզանում: Դու ինձ այն ասա: Նրան սիրում ես դեռ... առաջուանից աւելի ես սիրում:

**ԶջԱՐՍԿԻ.**—(Արհամարհանքով): Սխալւում ես, թանկագինս:

**Մլիթկի.**—Ո՛չ, ոչ, չեմ սխալւում:

**ԶջԱՐՍԿԻ.**—(Ուսերը թոթւում է):

**Մլիթկի.**—Իսկ ինչու ես այդքան առում նրան:

**ԶջԱՐՍԿԻ.**—Ատմէմ: Ես նրա նկատմամբ ոչ մի ատելութիւն չիմ զգում: այնուամենայնիւ ոչ մի պատճառ էլ չունեմ նը-րան շնորհակալութեամբ յիշելու:

**Մլիթկի.**—Ա-ա: Բո յոյսերը շատ են հեռու տարել քեզ:

**ԶջԱՐՍԿԻ.**—Այդ յոյսերի հեղինակը ես չեմ, այլ մի ուրիշը:

**Մլիթկի.**—Ա-ա: Իսկ Պարիղ ձեր միասին եղած ժամանակը, ո՞ո՞ սո՞ ք պո՞ւմ էիր զու մի անգամ: Դէն, ասա՝ ինչպէս է եղել այդ:

**ԶջԱՐՍԿԻ.**—(Ծիծաղում է): Դու լաւ յիշողութիւն ունես:

**Միհյն թէ** այն ժամանակուայ պատահածները ոչ այլ ինչ էին, եթէ ոչ չնչին յիմարութիւններ:

**Մլիթկի.**—Դէ, պատմիր:

**ԶջԱՐՍԿԻ.**—Չնչին յիմարութիւններ... Նստած էինք գինե-տան մի առանձնասենեակում և շամպանիա էինք խմում: Օլգան սաստիկ սիրում է Շամպանիայի գինին: Ճիշտ է, չափից քիչ ա-մելի էինք խմել...

**Մլիթկի.**—Յետո՞յ...

**ԶջԱՐՍԿԻ.**—Ահա և բոլորը... (Հեղնութեամբ): Բարեկամս ինձ որոնելիս է եղել... Նա էլ էր շամպանիայի սաստիկ սիրահար...

**Մլիթկի.**—(Կործ ուրախութեամբ): Եւ գուք, այսպէս ասած, ընդհատուած սիրոյ զոհ եղաք: Ժամանակով մի հրաշալի բալ-լաղա եմ կարդացել այդ թեմայով զրուած: (Լոռութիւն): Այժմ այլ-ես չմաս սիրում նրան: Սակայն որքան շուտ դադարեցիր նրան սիրելուց: Այդ ինչպէս պատահեց:

**ԶջԱՐՍԿԻ.**—Այնքան էլ արագ չսառեց այդ սէրը... Դան-գաղ, պատառ-պատառ չըացաւ, քայքայուեց իմ սէրը: Սակայն

չ որ Օլգային տեսնում էիր տղամարդկանց այն շրջանում, որի հետ ես շփում էի ամեն օր: Ես չէի կարող տանել այն, որ վաւաշոտ ձեռքեր մեկնում, պարզում էին դէպի Օլգան...

**ՄԼԻՑԿԻ.**—(Չսպուած կատաղութեամբ): ՀԷ-ՀԷ... Այդ շատ լաւ է ասուած: Բայց, բայց... դու վատ յիշողութիւն ունես: Ես երբէք չեմ մոռանալ այն ողկորութիւնը, որով խօսում էիր Օլգայի մասին, քանի գեռ ծանօթ չէի նրան: Այն ժամանակ նա քեզ համար գեղեցիկ էր, համարձակ, մի ինչ-որ գերմարդկային կին, որ ոտնակոլի է անում բոլոր իրաւունքները, որ բարձր է կանգնած բոլոր նախապաշտումներից, որ դու այժմ այդպէս ջերմ կերպով պաշտպանում ես... Յիշում ես:

**ԶԶԱՐՄԿԻ.**—Ի՞նչպէս չէ, յիշում եմ... Այն ժամանակ ես նրան գեռ չէի ճանաչում: Օլգան այժմ դաւաճանում է այն իշտէալներին, որոնց մի ժամանակ երկրպագում էր:

**ՄԼԻՑԿԻ.**—Դու մի արտակարգ ընդդիմախօս ես: Աւելի քան մութը կերպով ես խօսում: Յամենայն դէպում չեմ կարողանում հասկանալ, թէ ինչու այդքան ջերմ կարեկցութեամբ ես վերաբերում մեր յարաբերութիւններին:

**ԶԶԱՐՄԿԻ.**—Ե՞ս. Աստուած ազատի: Դու ինքդ ես ինձ հարկադրում: Ոչ մի այլ բանի մասին խօսել չես կարողանում: Շարունակ ինձ հարց ու փորձ ես անում և չորս բոլորքս ես պըտառում այնպէս, ինչպէս կատուն տաք ապուրի շուրջը: Գուցէ կարծում ես, որ Օլգայի մասին այնպիսի բաներ գիտեմ, որոնք անյայտ են քեզ, և կամենում ես ինձ յանկարծակիի բերել, հարց նել, իմանալ...

**ՄԼԻՑԿԻ.**—(Մոռանում է, ինքն իրեն եւ ծաղրական ծիծաղով նրան ընդհատում): ՀԷ-ՀԷ: Ասա, եան, ձիշտ է արդեօք, որ քեզ հիւրանոց չեն թողել:

**ԶԶԱՐՄԿԻ.**—(Ժպտում է): Կամենում ես, որ բարկանամ:

**ՄԼԻՑԿԻ.**—(Կծու հեղնութեամբ): Ելենայի հետ ունեցած իմ խօսակցութիւնը (ցոյց տալով գուռը) նախասենեակից չես լսել:

**ԶԶԱՐՄԿԻ.**—(Անամօթաբար): Կամենում ես, որ քեզ մենամարտի հրաւիրեմ:

**ՄԼԻՑԿԻ.**—(Աւելի եւ աւելի ատելութեամբ է ծիծաղում): Ճիշշտ է որ երեկ մտածում էիր, թէ Ելենան գիտէ ամեն ինչ:

**ԶԶԱՐՄԿԻ.**—Բաւական է: Դու ստեղծուած ես այնպիսի ամուսին լինելու, որ իդէալականապէս պիտի տանջէ իր փորձուած տիրուեուն:

**ՄԼԻՑԿԻ.**—(Մի բոպէ նայում է նրան): ԱՇ, ինչ շշպուեցէր: (Զարութեամբ): Սատանանց ես, սատանայ: (Յանկարծ անսովոր սիրափրութեամբ): Վախեցիր Աստուծուց. չէ որ մենք սուրճը բոլորվին մոռացել ենք: (Գնում է հարեւան սենեակը):

**ԶԶԱՐՄԿԻ.**—(Հեղնորին ժամում է եւ դիմարկով խաղում):

**ՄԼԻՑԿԻ.**—(Յօրանջելով վերադառնում է): Այսօր իսկապէս տանուել ես տուել բոլոր փողերդ:

**ԶԶԱՐՄԿԻ.**—Աւելի քան բոլորը:

**ՄԼԻՑԿԻ.**—Նշանակում է պարս էլ մնացիր:

**ԶԶԱՐՄԿԻ.**—Այս հարկաւոր է այսօր և եթ վճարել:

**ՄԼԻՑԿԻ.**—Ես սիրով կառաջարկեմ քեզ այնքան, որքան հարկաւոր է պարտքդ վճարելու համար:

**ԶԶԱՐՄԿԻ.**—Շնորհակալ եմ:

**ՄԼԻՑԿԻ.**—Հէսց հիմա ես կամենում:

**ԶԶԱՐՄԿԻ.**—Կարելի է և յետոյ:

**ՄԼԻՑԿԻ.**—Ի՞նչպէս կամենաս: (Լութիւն: Ման է գալիս. յետոյ կանդ է առնում Զջարսկու առջեւ: Նրանք մի վարկեան նայում են իրար): Մենք երկուսս իրար հետ աւելի լաւ էինք, քանի գեռ...

### 3) ՆՐԱՆՔ ԵՒ ԵԼԵՆԱ

**ԵԼԵՆԱ.**—(Ներս է մանում սուրճը ձեռքին, տեսքով շատ հանգիստ):

**ԶԶԱՐՄԿԻ.**—Բարե ձեզ:

**ԵԼԵՆԱ.**—(Կարգի է բերում բաժակները եւ ձեռք տալիս Զջարսկուն: Կատում են եւ լուռ սուրճ խմում):

**ՄԼԻՑԿԻ.**—(Յանկարծ): Ներեցէք, որ պէտք է մի բոպէով խմբագրատուն կնամ: (Որոնում է զիստրկը): Քիչ կը սթափուեմ սրբագրութեան ժամանակ: (Գուրս է գնում: Զջարսկին եւ Ելենան մի առժամանակ լուռ նստած են):

**ԶԶԱՐՄԿԻ.**—Ծխախոս չունէք:

**ԵԼԵՆԱ.**—(Գրասեղանի վրայից վերցնելով տալիս է նրան): Խնդրեմ:

**ԶԶԱՐՄԿԻ.**—(Վառում է ծխախոտը եւ զլային շարժումով բաժակը դէն ք. սւմ):

**ԵԼԵՆԱ.**—(Յանկարծ): Ասացէք, խնդրեմ, Ստեփանն այդ կնոջ համար երշ-նիկ կը լինի:

**ԶԶԱՐՄԿԻ.**—Երջանիկ: Ոչ, ոչ:

**ԵԼԵՆԱ.**—Զէ որ շատ է սիրում նրան:

**ԶՁԱՐՄԿԻ.**—Նրան թւում է միայն: Նրա սիրոյ երեք քառորդը դատարկ փառասիրութիւն է: Այդ կինս իր համարձակ նայուածքով շլացրել է նրան: Նրա գեղեցկութիւնն ու հպարտութիւնը գրգոռում են Ստեփանի ինքնասիրութիւնը: Նրա շուրջը տղամարդկանց մի ամբոխ է հաւաքուել: Ստեփանին հմայել է գլխաւորապէս այն հանգամանքը, որ այդ կինը նրա վրայ բարեհաճ ուշադրութիւն է դարձրել, որ ինքը՝ Ստեփանն է նրա ընտրեալը: Այդ կինը կարողանում է մարդկանց զբաւել, գրգոռել և մի հայեցքով խոստանում է աւելի, քան կարող է տալ իւրաքանչիւր կին, եթէ նոյն իսկ անճնատուր լինէր ամբողջ հոգով: Բանիքանիսն են խճճուել, կաշկանդուել նրա ցանցում... ձանաչում էի մէկին, որ այդ կնոջ պատճառով դարձել էր,—հէ-հէ,—ինչպէս անուանեմ, որոշեմ... Է՞հ. ձեր ինչին է հարկաւոր որոշումը: Նա երջանիկ էր, և սարսափելին այն է, որ և նշանուած էր... Այդ ծանօթս յանկարծ, չգիտեմ ինչպէս, պատահում է այդ կնոջը... (Մտքի մէջ է ընկնում): Բաւական է որ այդ կինը նրան հպատակեցնում է միանգամից: Ծանօթս սաստիկ զբաղւում էր նրանով, և այդ կինը հրապուրում էր նրան, ապա հրում-հեռացնում. թոյլ էր տալիս, որ ձեռքերի վրայ գրկած սանդուղքներով տանեն իրեն մինչև գուռը և ապա զլուխը շարժում ու ասում՝ merci! Երևակայեցէք՝ ինչպէս ապուշ կտրած պիտի լինէին այդ բռպէին նրա երկրպագուները: Հէ-հէ. հարկաւոր էր տեսնել այդ պարոնի զարմանալիօրէն ապուշ գէմքը: Այդ պարոնն այնպէս էր ատում այդ կնոջը, որ յաճախ է ցանկացել խեղդել նրան. այնուամենայնիւ սողում էր նրա առջև և աղաչում. մի անգամ նոյն իսկ լաց է եղել: Հա-հա-հա... երեխի պէս լաց է եղել: Տարօրինակ է, որ այդ պարոնն ինքնասպանութիւն չգործեց... (Խորհրդաւոր, զարշելի ժպիտով): Նա մի անգամ նոյն իսկ կողոպտել էր իր մի բարեկամին...

**ԵԼԵՆԱ.՝Կողոպտել:**

**ԶՁԱՐՄԿԻ.**—Իր ամենամտերիմ բարեկամին, որպէսզի զնայ՝ այդ կնոջը բերի: Ճանապարհը թանկ արժէր, շատ թանկ... Նրա խիղճը քրէական դատարանի հետ գործ ունեցաւ:

**ԵԼԵՆԱ.՝Այդ ձեզ խիղճն է:**

**ԶՁԱՐՄԿԻ.**—Այս: (Լոռութիւն):

**ԵԼԵՆԱ.՝Ստեփանին փրկելու համար ոչ մի չ:**

**ԶՁԱՐՄԿԻ.՝Ինչ որ կարելի է անել, կանեմ: (Անհանդիստ):**

**ԶԵՂ ՀԱՄԱՐ ԿԱՆԵՄ:** (Շփոթուած): Դուք զարմանալի կերպով նման էք իմ նախկին հարսնացուեին: Այնքան էք յիշեցնում նրան... (Խօսում է ցածր եւ արագութեամբ): Ոչինչ չեմ ուզում. ինքս ինձ չեմ յարգում և չեմ էլ պահանջում, որ ուրիշներն ինձ յարգեն, Ես մարդկանց արհամարհում, ատում եմ: Բայց... բայց կան բաներ, որոնց առջև թուլանում, մեղմանում եմ, սիրոս այնպէս է ցաւում... և... (Եր վրայ ոյժ է զործ զնում եւ տեղից բարձրանում): Ինչ որ կարելի է անել, կանեմ: Սակայն բանն այն է, որ այստեղ ոչինչ չի կարելի անել, բոլորովին ոչինչ: Այդ կինն ում որ ճանկեց, այլ ևս բաց չի թողնիլ... Ողջ հոգին կը ծծի, դէն կը հրենից, սակայն բաց չի թողնիլ: Եւ մարդ ստիպւում է միշտ կապուած միան... (Ուժիո): Միթէ այս բոլորից յետոյ գեռ սիրում էք Մլիցկուն: Արգեօք դեռ ևս մի քիչ հպարտութիւն և խելք ունէք:

**ԵԼԵՆԱ.՝(Նրան ընդհատելով):** Ի՞նչ օգուտ տուին ձեզ հպարտութիւնն ու խելքը ձեր սիրոյ ժամանակ: Աստուած իմ, Աստուած: Հազար անգամ ինքս ինձ կրկնում եմ. «Ստեփանը չի սիրում ինձ. Նա մի ուրիշին է սիրում. թող գնայ, թող երջանիկ լինի»: Իսկ խելքն ասում է, թէ նրան պահեն ստորութիւն է, եթէ ինձ չի սիրում: Իսկ սիրոս փրկութիւն է իննզրում և աղերսում: Ես պատրաստ եմ ընկնել նրա ոտքերը, փաթաթուել ու բաց չթողնել: Թող ծեծի, թող ոտքերով կոխոսի ինձ, սիրայն թէ մնայ: (Բնուու է զուլը): Օ՞հ, Աստուած իմ, Աստուած. այժմ ի՞նչ կը լինի: (Ինը իրեն): Ի՞նչ կը լինի. Ի՞նչ կը լինի: (Լոռութիւն, ուժգին): Դուք պարտաւոր էք օգնել ինձ: Օգնեցէք ինձ, օգնեցէք: Առանց նրան ես կորած եմ: Չունեմ ոչ տուն, ոչ ծնողներ. ամբողջ աշխարհն ինձանից հրաժարուել է: Ամբողջ աշխարհում ես միայն մի Ստեփան ունեմ, մի Ստեփան, միայն մի Ստեփան...

**ԶՁԱՐՄԿԻ.՝(Աւելի ու աւելի անհանդիստ):** Բայց ի՞նչպէս օգնեմ ձեզ, ինչնզի օգնեմ: Այդ կինն Ստեփանին կաշկանդել է: Ստեփանի ամբողջ հոգին հիւանդու վէրք է, և այդ կնոջից նա չի կարող հեռանալ:

**ԵԼԵՆԱ.՝(Յողնած ձայնով):** Այս, այս, իրաւացի էք: Այստեղ ոչինչ չի կարելի անել. այստեղ ոչ ոք չի կարող ինձ օգնել, ոչ ոք: (Լոռութիւն):

**ԶՁԱՐՄԿԻ.՝(Մի վայրկեն յետոյ, կարծիս, յանկարծ սարսափահար եղած):** Որքան սարսափելի է այս կեանքը: Ինչո՞ւ, ինչո՞ւ ապրել:

**ԵԼԵՆԱ.՝Ի՞նչ էք ասում:**

ԶՉԱՐՍԿԻ. — Մեզ երկուսիս համար երջանկութիւն չկայ, իսկ անկարելի է ապրել առանց երջանկութեան գէթ մի փոքր նշոյլի:  
ԵԼԵՆԱ. — (Մտախոն): Անկարելի է... (Լուռթիւն: Մտահողութիւնից սթափուելով): Կար՞ո՞ էք երկալայել այն մարդու դրութիւնը,  
որին մահուան դատավճիռ են կարդացել:

ԶՉԱՐՍԿԻ. — Ի՞նչ, ի՞նչ:

ԵԼԵՆԱ. — Մահուան դատավճիռ:

ԶՉԱՐՍԿԻ. — Այս:

ԵԼԵՆԱ. — Իմ մահուան դատավճիռն ինձ մօտ է: Երեկ հեռաւ գիր է ստացուել: Այդ կինն է հեռագրել, գիտեմ ես: Ես գիտեմ, թէ ինչ է հեռագրուած, Հեռագիրը չեմ բացել, բայց գիտեմ, որ վաղ կամ միւս օրը, երկու-երեք օրից յետոյ այդ կինը գալու... և վերցնելու է Ստեփանին... Գիտեք, ամեն անգամ, հէնց որ վերցնում եմ այդ հեռագիրը և կամենում եմ Ստեփանին տալ, ձեռքս թուլանում, քար է կարւում, և ամբողջ մարմնով դողում եմ: Որքան տնմտութիւն: Զէ որ վերջապէս մի անգամ պէտք է այդ հեռագիրը Ստեփանին տամ. և եթէ նոյն իսկ չտամ, չէ որ ոչ մի բան չի փոխուել այդպիսով, ոչ մի բան:

#### 4) ՆՐԱՆՔ ԵՒ ՄԼԻՑԿԻ

ՄԼԻՑԿԻ. — (Ներս է գալիս մտախոն ու տիտոր, նստում սեղանի մօտ եւ իրեն համար սուրճ ածում): Գուցէ կամենում եա մի քիչ պառկելու ընել:

ԶՉԱՐՍԿԻ. — Այս: շատ յոգնած եմ:

ՄԼԻՑԿԻ. — Գնա իմ սենեակը մի լաւ ընիր. իսկ ճաշից յետոյ գործու կը կարգագրենք:

ԶՉԱՐՍԿԻ. — (Բարձրանում է տեղից): Դու չես պառկելու:

ՄԼԻՑԿԻ. — Ո՛չ: Ես շատ դործ ունեմ:

ԶՉԱՐՍԿԻ. — Երկու ժամ յետոյ ինձ զարթեցրու: Գիշեր բարի: (Գնում է):

#### 5) ՄԼԻՑԿԻ ԵՒ ԵԼԵՆԱ

ՄԼԻՑԿԻ. — (Մի բոպէ լուռթիւնից յետոյ շատ լուրջ, գետնին նայելով): Մի բարկանալ, Հելա, եթէ քեզ մի որեէ անախորժ բան եմ տաել:

ԵԼԵՆԱ. — (Խորին վշտով): Ես էլ նոյնն էի կամենում ինդը:

Քեզանից: Յուզուել էի, ներիր ինձ: Այդ բոլորն այնպէս անսպասելի կերպով պատահեց որ... Ուղեղս տանջւում է այդ անախորժ դէպքից, տանջւում:

ՄԼԻՑԿԻ. — Այլիս չխօսենք դրա մասին, մենք էլի միասին կապրենք, և ամեն ինչ կը մոռանամ:

ԵԼԵՆԱ. — Ո՛չ, ոչ: Ամեն ինչ վերջացել է մեր միջն: Այժմ ես գիտեմ, որ ինձ չես սիրում և երբեք եւ չես սիրել: Ո՛չ, Ստեփան, ոու բոլորովին ազատ ես, ես քեզ արգելք չեմ լինիլ, չեմ պահիլ:

ՄԼԻՑԿԻ. — (Աւժգին): Իսկ ես կամենում եմ միայլ: (Խրին իշխանով): Ո՛չ, ոչ: այնտեղ ինձ համար երջանկութիւն չկայ: Ես ամեն ինչ կը մոռանամ:

ԵԼԵՆԱ. — (Լաց է լինում): Ինձ մի տանջիլ մի շարչարիլ: Ես չեմ ուզում քո սէրը. ինձ համար ատելի է այդ հնագանդութիւնը. Իս գերադասում եմ, որ ինձ ծեծես, ատես... չեմ ուզում, չեմ ուզում:

ՄԼԻՑԿԻ. — Լաց մի լինիլ, Հելա, լաց մի լինիլ: Ամեն ինչ շատ կը լինի: Պէտք է աշխատեմ մոռանալ: Դու այնքան բարի ես. ոու ինձանից ոչինչ չես պահանջել երբեք: Կապրենք միասին: Զէ որ ոու միայն իմ ես եղել, միայն իմը, ոչ ոքի ձեռք քեզ դիպել: (Մտախոն) Զջարսկին իրաւացի է:

ԵԼԵՆԱ. — Զջարսկի՞ս: Զջարսկին ի՞նչ է ասել:

ՄԼԻՑԿԻ. — Ոչինչ... ոչինչ... կապրենք միասին խաղաղ...

ԵԼԵՆԱ. — (Ծիծաղում է յանկարծ զղային եւ ցնցող ծիծաղով): Համա-համա-համա: Ինձ մի թողնիլ, Ստեփան, մի թողնիլ: Ի սէր Աստուծոյ, ինձ կրոստեան մի մատնիլ: (Փամաթում է նրա վզով): Նայիր, այս-տեղ, այստեղ է իմ զատավճիռը: Տես, այստեղ է նրա հեռագիրը, նա գալիս է: (Ընկնում է ամոռի վրայ, զղայնաբար զրպանները վնտում): Տես, այստեղ... այստեղ... (Գողակվ, ցնցուելով սեղմում է հեռագիրը, տախի Մլիցկուն եւ կիսախնեղաբար աշբերով նայում է նրան: Մլիցկին բաց է անում հեռագիրը, կարգում մի երկու անգամ. զէմքը անսահման սարսափ է արտայալում, յետոյ զառնում է դէպի պատուհանը):

ԵԼԵՆԱ. — (Աքերը վայրենաբար բացած ցատկում է աթոռի վրայից: Խոպոտ ձայնով): Ի՞նչ է, ի՞նչ:

ՄԼԻՑԿԻ. — Գալիս է:



## Գ Ո Թ Ժ Ա Գ Ա Խ Թ Ի Ւ Յ Բ .

Մի օր յետոյ: Միւլոյն սենեակը, ինչ որ առաջին գործողութեան ժամանակ: Մութը զնալով խտանում է: Բազմոցի վրայ նստած է օջարսկին և ծխախոս է ծխում: Նրա առջև սեղանի վրայ դրուծ են գարեջը մի քանի շներ: Ելմանն՝ Զշաբսկուց քիչ շուր եկած՝ նայում է պատուհանից դուրս: Վարագոյը բարձրացնելուց յետոյ բեմի վրայ մի բուքէ խորին լուսութիւն է տիրում:

### 1) ԵԼԵՆԱ ԵՒ ԶԶԱՐՍԿԻ

ԶՅԱՐՍԿԻ.—(Հակում է: Երկար լուսիւն): Տարօրինակ տրամադրութիւն է տիրում այս սենեակում: Աշուն է... Աշուն է... Շուտով անձրեները կը սկսուին: Սարսափելի է, երբ անձրեը պատուհանների ետև հառաջում է ամբողջ օրերով:

ԵԼԵՆԱ.—(Չի պատասխանում):

ԶՅԱՐՍԿԻ.—(Մի բոսէ: յետոյ): Ստեփանն ինչո՞ւ այսքան ուշացաւ:

ԵԼԵՆԱ.—(Կամաց ծիծաղում է): Երկի, շուտ չի գալ:

ԶՅԱՐՍԿԻ.—Տիկին Ագրելին վաղն անշուշտ կը գայ:

ԵԼԵՆԱ.—Կարծօրք:

ԶՅԱՐՍԿԻ.—Ի՞նչ էք մտագիր անել:

ԵԼԵՆԱ.—Ե՞ս (նիծաղում է խելացնոր ծիծաղով): Ե՞ս: Ոչինչ, ոչինչ... Վախճանին եմ սպասում: Ես այնպէս հանգիստ եմ... Միայն սպասում եմ, սպասում... Խակ յետոյ՝ թող նրանք երջանիկ լինեն: Ստեփանն այդ կնոջը սիրում է, և այս վերջինս էլ, երկի, նրան է սիրում... Այդ կինն ինչո՞ւ չպիտի սիրէ Ստեփանին...

ԶՅԱՐՍԿԻ.—(Նիծաղում է ծաղրաքար): Այդ կի՞նը: Սիրում է: Հէ-հէ: Նա սիրել չի կարող: Նա միայն իրեն է սիրում: Իր օնտափառութիւնը, իր հպարտութիւնը, իր գեղեցկութիւնը:

ԵԼԵՆԵՆԱ.—(Ստու): Այդ բանը գուք չէք կարող իմանալ: Որ նա ձեզ չի սիրել զա զեռ ևս չի կարող իրը հիմք ծառայել պնդելու, թէ այդ կինը չի կարող Ստեփանին սիրել: Այդ գեպում ինչո՞ւ

է հաւանութիւն տալիս Ստեփանի հետ ամուսնալու: Զէ որ Ստեփանը ոչ յայտնի մարդ է, ոչ էլ հարուստ: նշանակում է՝ այդ կինը սիրում է Ստեփանին, սիրում, և սա էլ նրա հետ երջանիկ կը լինի:

**ԶՅԱՐՍԿԻ.**—(Դառն հեղութեամբ): Ըստ իս՝ ձեր հնագանդութեան մէջ մի ինչ-որ հերոսական բան կայ... Այն, այն... Հնագանդութիւնը, ասում են, միշտ հերոսական է: (Յողնած մպում է): Սակայն հերոսութիւնը մի կողմ թողնենք: Մեզ հերոսութիւն չի հարկաւոր, մի քիչ երջանկութիւն, երջանկութեան մի փոքրիկ կաթիւ: ահա ըոլորը: Այդ է մեզ հարկաւոր: Անկեղծ եղէք: Ամեն ինչ կը ատյի, եթէ ինձ հետ բաց, անկեղծ խօսէիք: Ես չեմ հաւատում ձեր հնագանդութեանը, ձեր հպատակութեանը և զգում եմ, թէ ինչպէս է արինաքամ լինում ձեր սիրտը: Իսկ ես շատ եմ համակրում ձեզ, շատ, աւելի՝ բան ինձանից կարելի է սպասել: Դուք այնպէս կենդանի կերպով յիշեցնում էք իմ հարսացուին:

**ԵԼԵՆԱ.**—Ոչ որի հետ այնպէս անկեղծ չեմ եզեւ, ինչպէս ձեզ հետ: Վերջին ժամանակներս բարեկամական այնքան կարեկցութիւն էք ցոյց տուել ինձ... Սակայն ես այնպէս եմ յոդնած: Ոչ մի կերպ չեմ կարողանում մտքերս ժողովել, ոչ մի միտք չեմ կարողանում մինչև վերջը մտածել... Այժմ ամեն ինչ վերջացել է: Այս տանջանքը... վերջին օրերի այս սարսափելի տանջանքը ները...

**ԶՅԱՐՍԿԻ.**—(Ուժգին): Դուք Ստեփանին չպիտի թողնէք: Եթէ սիրում էք նրան, ապա պահեցէք ձեզ մօտ: Ստեփանն այն կնոջ հետ երբէք չի կարող երջանիկ լինել, այլ յուստիսը կը լինի ու կը տանջուի:

**ԵԼԵՆԱ.**—(Դառն ժամանութիւն): Ոչ... ոչ... Ամեն ինչ կորած է... Այս վերջն է...

**ԶՅԱՐՍԿԻ.**—Ստեփանի բարօրութեան համար զոհեցէք ձեր հպարտութիւնը: Զեղանից է կախուած նրա փրկութիւնը. այլապէս՝ Ստեփանը կորստեան կը մատնուի:

**ԵԼԵՆԱ.**—Ինչո՞ւ պիտի կորստեան մատնուի:

**ԶՅԱՐՍԿԻ.**—(Քիչ մտածելուց յետոյ): Որովհետեւ... որովհետեւ... ինչպէս բացատրեմ ձեզ: Գուցէ յայտնի է ձեզ, որ մարդկանց մէջ մի բան կայ, և ծեր մարդիկ այդ բանն անարատութիւն են անուանում... Հէ-հէ... Այն, այն, անարատութիւն... Այժմ դա արգէն հնութիւն է: Անարատութիւնը նոյն խակ կոմիկական նշանա-

կութիւն է ստացել: Հէ-հէ... Երիտասարդներն աղջկանց այն միտքն են բարողում, թէ անարատութիւնը ծաղրելի է: Եւ մենք՝ յառաջադիմութեան մարդիկս ծիծաղում ենք այդ առաքինութեան վրայ. բայց այդ ծիծաղը, այդ հեգութիւնը տեսականապէս միայն գոյութիւն ունի... որովհետև սրտի մէջ... օհ, սրտի մէջ: Կուզէի տեսնել մի տղամարդու, որ գերազանչը ձեռքից-ձեռք անցնող կնոջն այն անարատ ու մաքուր կնոջից, ինչպիսին... դուք էք... ԵլենԱ.—Ի՞նչ էք կամենում ասել:

**ԶՉԱՐՄԿԻ.**—(Մի բոպէ լութիւնից յետոյ): Մլիցկին պատկանում է այն մարդկանց թուրին, որոնք իրենք են իրենց խարում, այդպիսի մարդիկ բնաւորութեամբ ընդհանրապէս թոյլ են լինում, և նրանց համար այսպէս կոչուած յառաջադիմութիւնը... հա-հա-հա- յառաջադիմութիւնը մի այնպիսի իդէալ է, որի անունով այդ մարդիկ խեզզում են իրենց սրտի ամենաաղնիւ բնազդները, ինչպէս օրինակ՝ վաղեմի բարոյականութիւնը: Մլիցկին բարոյական դրսկիշուութեան ներկայացուցիչն է: Նրա սիրաը լցուած է այդ «հութեամբ», բայց նա ամացում է դրանից: Հէ-հէ: Նոյն իսկ ամենագեղցիկ թէօրիաները ծիփ նման կը ցնդուին ու կը չքանան, եթէ մարդուս սրտում բոյն դնի մի որդ և սկսի դիշերցերեկ կրծել այն:

ԵլենԱ.—Չեմ հասկանում, թէ ինչ էք կամենում ասել:

**ԶՉԱՐՄԿԻ.**—Գիտէ՞ք, այն կինը, որի հետ Մլիցկին կամենում է ամուսնանալ, առաջ մի ուրիշի, գուցէ և ուրիշների սիրուէին է եղել:

ԵլենԱ.—(Նայում է նրան ապշած): Իսկ Ստեփանը դիտէ՞ այդ:

**ԶՉԱՐՄԿԻ.**—Գիտէ:

ԵլենԱ.—Ե՞ւ...

**ԶՉԱՐՄԿԻ.**—Ինքներդ ասացէք նրան: Երբ նրան կասէք այդ, գուցէ, ինքը հասկանայ, թէ ինչ կը նշանակի մաքրութիւն, ինչ կը նշանակի վերցնել մի այնպիսի անարատ կին... հէ հէ... Յիշում էք համբէտը... Ծեր Պոլոնիուսն իրաւացի է... մինչև անդամ լուսնի անհամեստութիւնը և հետաքրքրութիւնը կարող է պղծել այդ անարատութիւնը...

ԵլենԱ.—Ինչու այդ մասին ինձ առաջ չասացիք... (Սարսափելի անհանդասութեամբ): Ստեփանն այդ ամենը դիտէ, բայց և այնպէս կամենում է ինձ թողնել, ինձ, թողնել ինձ մի կնոջ համար, որ ձեռքից-ձեռք է անցել... Օ՛հ Ստուած իմ... Ստուած իմ...

**ԶՉԱՐՄԿԻ.**—Դեռ ամեն ինչ կորած չէ: Ասացէք դուք նրան: Այդ ինքներդ պիտի ասէք նրան: ԵլենԱ.—(Յուսահատական ձայնով): Ոչ, ոչ. իմ ասելը ոչ մի հետևանք չի ունենալ: Այդ արգէն չի օգնիլ. նա գիտէ այդ. գիտէ ամեն ինչ բայց և այնպէս դարձեալ գնում է նրա մօտ... Աստուած իմ, Աստուած ինչպէս է կարողանում սիրել այդ կնոջը:

**ԶՉԱՐՄԿԻ.**—Ի՞նձ լսեցէք:

ԵլենԱ.—(Բոլորովին յուսահատ): Ոչ, ոչ, ոչ: Ոչինչ մի ասէք: Միտք չունի... Ստեփանը ծանօթ է այդ կնոջ անցեալին, բայց և այնպէս բայց և այնպէս ինձ թողնում է... Այստեղ ոչ մի բանով չի կարելի օգնել, ոչ մի բանով... (Լութիւն: Ելենան խոր մոածմունքի մէջ է ընկրմում: Յանկարծ): Վաղուանից պիտի մենակ մնամ... (Եփոթւած, անհանդասութեամբ): Միայնակ: Այդ ինչպէս կը լինի: Մենակ ինչպէս լինեմ... Մենամիայնակ... Օ՛հ, Ստուած իմ: Այդ, երեխ, սարսափելի էտ:

**ԶՉԱՐՄԿԻ.**—Աւելի քան սարսափելի է դա: (Մի բոպէ յետոյ): Զէք կարող երևակայել, թէ մենակութիւնը որքան սարսափելի է... այն գիշերները՝ խելացնորութեան և խելագարութեան գիշերները... Գիշերը անկողնում... այնպէս սարսափելի լսու է... լսու է սրտիդ բարախում... լամպը հանգել է... իսկ սիրոդ շաբունակ, անընդհատ բարախում է, բարախում, բարախում... Մէկը դուռն է ծեծում... ճակատդ քրտինքով ծածկւում է... իսկ մէկը ծեծում է գուռը, ծեծում: (Ուժին. անկապ ֆրանքերով. սաստիկ սարսափած): Շուրջդ լսում են մի ինչ-որ խշխցոց... շշուկներ... ցատկում ես անկողնից, ամբողջ մարմնով գոզում, մոմը վառում... չես համարձակում յետ նայել, որովհետև մէկը կանգնել է ետեղ ու ձեռքերը պարզում: (Աւելի եւ աւելի արադ): Իսկ գոները, գոները քեզ թւում է թէ բացում են... կամենում ես վազել գէպի զըռները, նետուել, նրանց փակել... կամաց, սողալով մօտենում ես... Ստուած իմ: Դոները բացում են...

ԵլենԱ.—Աստուած իմ:

**ԶՉԱՐՄԿԻ.**—Իսկ ճրագի բոցը սարսափելի ստուերներ է ձգում, ամբողջ սենեակը լի է այդ գողդովուն, անհաստատ, անհանգիստ լոյսով... Ստուերները վամպիրների են կերպարանափոխում, իջում են պատերից, պարզում են իրենց ձեռքերը, գայլի մօտենում են աւելի մօտ... մօտ...

ԵլենԱ.—Բաւական է, բաւական է...

**ԶՉԱՐՄԿԻ.**—(Սթափում է, ձեռքով նակատը սրբում, մի բոպէ յեղոյ): Ստեփանն այժմ վանուժ-հեռացնում է ձեզանից տեսիլիները և ցրում ցնորդները: Բայց երբ միայնակ կը մնաք, միայնակ և կատաղի յուսահատութիւնը ձեր սրտում...

**ԵԼԵՆԱ.**—(Որպէս խելագար): Անա թէ ինչ է ինձ սպասում:

**ԶՉԱՐՄԿԻ:**—Այս ահա թէ ինչ է ձեզ սպասում:

**ԵԼԵՆԱ.**—(Սարսափելի անհանգստութեամբ): Դրա վերջը բարի չի լինիւ...չի լինիւ...

**ԶՉԱՐՄԿԻ.**—(Սառը եւ անյոդող): Այս, դրա վերջը բարի չի լինիւ... Դուք կորստեան կենթարկուէք. իսկ Մլիցկու վիճակն աւելի՛ սարսափելի կը լինի... գիշեր և ցերեկ նա իրեն պիտի հալածիր կրծի և իր եղանակը նախորդների մասին մտածիր. Այդ նախորդների համար այդ կինը միայն սիրուհի է եղել, իսկ իրեն համար ամուսին: Հա-հա-հա-հա: Մլիցկու կինն ուղիների սիրուհին է եղել: Այդ միտքը կը թափանցի նրա արիւնը, կը թունաւորի նրա իւրաքանչիւր զգացումը և կապականիցնի նրա հոգին: Նրա վիճակը ձերինից աւելի սարսափելի կը լինի... Դուք կապրէք... Մարդ այդպէս հեշտութեամբ չի անջաւում կեանքից... Դուք պիտի հոգար ձեր աշխատանքի մասին: (Ընդհատում է): Այս, աշխատանքի մասին: Օ-օ, դա դժուար բան է... Դուք հարուստ ծնողների փայփայուած, երես առած աղջիկ էք. կրթուած էք շքեղութեան մէջ. և ստիպուած պիտի լինէք ման գալու դրասենեակից-դրասենեակ... սակայն կարող էք աշխատանք գտնել, որովհետեւ շատ լաւն էք, շատ լաւը... Հասկանում էք՝ ինչ կը նշանակի դա... դործ ճարելու համար հարկաւոր է շատ գեղեցիկ լինել...

**ԵԼԵՆԱ.**—(Չգում է, ծեռքերը կոտրուիմ): Ինչալէս էք տանջում ինձ... ինչալէս էք տանջում ինձ: Դէ ինչ անեմ ես: Նա ուշադրութիւն չի գարձնում իմ աղաշանքին... Երեկ իրենից գէն հրեց ինձ: Ամրող գիշերը ման էք գալիս սենեակում: Խելագարի նման պառկում էր և նորից վեր կենում... ու աղաջում և ոտքերս էր համրուրում... Աստուած իմ, նա կախարդուած է... և առանց այն կնոջ չի կարող ապրել... Ինչ արած... Թող գնայ, թող գնայ... Թող նրա հետ միասին կորստեան մատնուի, միայն թէ ինձ ոչ մի բանով չյանդիմանի... Իսկ ես իմ մասին չեմ մտածում. ինչ ուզում է թող պատահի ինձ, միայն թէ Ստեփանի յուսահատութիւնն ինձ չսալանի...

**ԶՉԱՐՄԿԻ.**—Նա կամենում է իր խայտառակ կոմեդիայով ձեզ հարկադրել...

**ԵԼԵՆԱ.**—(Սթափունելով), Ինչ ասացի՞ք, ի՞նչ: Դուք չեք համար- լակուիլ Ստեփանի մասին իմ առաջ այդպէս խօսել...

**ԶՉԱՐՄԿԻ.**—Ինչու: Մի անգամ էլ եմ կրկնում: Մլիցկին չնչին, խայտառակ կոմեդիա է խաղում: Ձեր ամուսնուն դէպի այդ կինը մզողը ոչ թէ սիրոյ զգացումն է, այլ մնափառութիւնը, ամենահասարակ, ողորմելի մնափառութիւնը:

**ԵԼԵՆԱ.**—(Կատաղած): Մուտ էք ասում: (Նայում է նրան տարօրինակ կերպով և աղաղակում): Դուք դեռ սիրում էք այդ կնոջը, սիրում էք, սիրում էք:

**ԶՉԱՐՄԿԻ.**—(Եփոթուած տեղից վեր է կինում):

**ԵԼԵՆԱ.**—Լոռում էք: Դուք սիրում էք այդ կնոջը և կամենում էք վրէժ առնել թէ նրանից և թէ Ստեփանից... Օ՞ո, ինչպէս գունատուել էք... Ինչալէս դողում էք...

**ԶՉԱՐՄԿԻ.**—Ես չեմ սիրում այդ կնոջը, բայց նրան կը ճըխւիմ, կը կոխկրամ, վրէժխնդիր կը լինեմ ձեզ և ինձ համար:

**ԵԼԵՆԱ.**—Ես չեմ ուզում, որ իմ պատճառով վրէժխնդիր լինէք: Չեմ ուզում, թոյլ չեմ տալ: Ստեփանը պիտի երջանկանաց թոյլ չեմ տալ, որ վրէժխնդիր լինէք: Ես պիտի ապրեմ, պիտի աշխատեմ, նրա օգնութիւնը կընդունեմ:

**ԶՉԱՐՄԿԻ.**—(Կատաղած): Այդ դուք չեք անիւ:

**ԵԼԵՆԱ.**—Կանեմ, կանեմ:

**ԶՉԱՐՄԿԻ.**—Մի աղաղակէք: Մլիցկին գասն ետես կանգնած է: Հա-հա-հա:

**ԵԼԵՆԱ.**—(Նայում է դրանը, որպէս կիսափելագար): Ա-ա: (Գնում է դէպի կողքի դուռը, մի փայլկեան կանգ առնում, նայում Զջարսկուն եւ դուրս գնում):

## 2) ԶՉԱՐՄԿԻ ԵՒ ՄԼԻՑԿԻ

**ՄԼԻՑԿԻ.**—(Կանգաղ բայլիրով մտնում է նախասենեակի կոնից և մօտենում Զջարսկուն): Ի՞նչ ասացիր Հելային: Ի՞նչ:

**ԶՉԱՐՄԿԻ.**—(Մատներով թմրկանարում է սեղանը և գարեջուր խըմում: Երկուսն էլ ատելութեամբ իրար են նայում): Ոչինչ չասացի, Միայն Հելան ապացուցեց ինձ, որպէս երկու անգամ երկու՝ չորս, որ ես քո հարսնացուին դեռ սիրում եմ և ուզում եմ վրէժխնդիր լինել թէ նրանից և թէ քեզանքից: Ուրիշ խօսքերով, Հելան էլ նոյնն ասաց, ինչ որ ինքդ ես մտածում: Ճիշտ չէ արդեօք:

**ՄԼԻՑԿԻ.**—Այն, մօտաւորապէս միկնոյնն է:

**ԶՋԱՐՄԿԻ.**—(Չարասրութեամբ մասրալով): Գիտեմ. արդէն վաղուց գիտեմ այդ:

**ՄԼԻՑԿԻ.**—Ինչու թշնամութեամբ ես վերաբերում ինձ:

**ԶՋԱՐՄԿԻ.**—Ոչ: Սխալում ես: Ես, քո թշնամին չեմ ընաւ: Ես ոչ ոքի թշնամի չեմ համարում:

**ՄԼԻՑԿԻ.**—Չեմ հասկանում, թէ իսկապէս ինչ պահանջներ կարող ես առաջարել նրան: Օլգան ինչով է մեղաւոր, որ չի կարողացել քեզ սիրել... Տեսնում ես, ես այնքան եմ յարգում քո խելքը, որ քո ատելութեան պատճառներն այլ բանի մէջ եմ ուրուսած:

**ԶՋԱՐՄԿԻ.**—Հըմ... Խելօք և արդար մարդ ես դու:

**ՄԼԻՑԿԻ.**—Ուրեմն պատճառը Ելենան է:

**ԶՋԱՐՄԿԻ.**—Գուցէ:

**ՄԼԻՑԿԻ.**—Չէ որ դու այնքան էլ կեղտու ու գոեհիկ չեմ, որ մտածես, թէ ես, Ելենային չսիրելով հանդերձ, կարող եմ նրա հետ ապրել...

**ԶՋԱՐՄԿԻ.**—Ես այնքան կեղտու և գոեհիկ եմ, որ չեմ ենթադրում, թէ դու կարող ես Ելենային անդունդ գլորել:

**ՄԼԻՑԿԻ.**—Քո կարծիքով, Հելան երջանիկ կը լինի, եթէ ես մնամ և իրեն ատեմ:

**ԶՋԱՐՄԿԻ.**—Դու խելքի կը գաս: Բացի դրանից՝ չէ որ անկարելի է Ելենային ատել:

**ՄԼԻՑԿԻ.**—Իսկ ինձ բոլորովին հաշուի չես առնում:

**ԶՋԱՐՄԿԻ.**—Բանն էլ հէնց այն է, որ հաշուի եմ առնում: Եթէ տիկին Ազրելիի հետ ամուսնանաս, ուղղակի կորած ես: Դու կը կործանուես հէնց այն երջանկութեամբ, որին ձգտում ես: Անցեալ ունեցող մի կողմէ հետ ամուսնանալը հանաք բան չէ:

**ՄԼԻՑԿԻ.**—(Ուժգին): Ասա ինձ, վերջապէս, ինչու շարունակ այդ յիմար անցեալն ես մէջ բերում:

**ԶՋԱՐՄԿԻ.**—Որպէսզի ուշքի գաս ու սթափուես:

**ՄԼԻՑԿԻ.**—Սակայն չէ որ ամեն ինչ գիտեմ արդէն:

**ԶՋԱՐՄԿԻ.**—Հէ-հէ: Ամեն ինչ: Կարևորն այստեղ այն չէ, որ մի որևէ մերկ փաստ գիտես, օրինակ այն՝ թէ Օլգան ժամանակով սրան-նրան է պատկանել: Այստեղ նշանակութիւն ունեն փոքրիկ մանրամասնութիւնները, ննջարանի չնչին և մանր գաղտնիքները... փոքրիկ մանրամասնութիւնները... Հէ-հէ-հէ... ինչպէս ասեմ... այն բոլոր գաղտնիք գկուանքները, որ հարկաւոր

է թագցնել մարդկանցից... հահանգամաս... Գիտես այն բոլոր գկուանքները, որ չի տալիս ամուսնութիւնը: Ամուսնացած մարդը /չգիտէ/ ինչ բան է գողը և կամ այն երկիւղը, թէ արդեօք որևէ մէկը չի խանգարիլ իրեն. նշան չի վիճակում մութ սանդուղներով գողէ-գող սողալ դէպի սիրոյ տաճարը...

**ՄԼԻՑԿԻ.**—(Յաւ զգալով, ինքն իրեն): Այդ ձեռվ ապրելուն էլ համաձայն եմ, միայն թէ Օլգան ինձ հետ լինի... (Ման է զալիս անհանգիստ կերպով. ծիծարում է կարճ եւ ընդհատ ծիծարով): Գուցէ կամ մենում ես դարձեալ մի որ և է բան ասել:

**ԶՋԱՐՄԿԻ.**—Հնչպէս չի... Ինձ մի ծխախոտ տուր:

**ՄԼԻՑԿԻ.**—(Տալիս է ծխախոտների մը արկոյ): Հայրենիքից որևէ լուր չեմ ստացել:

**ԶՋԱՐՄԿԻ.**—Քեզ ձանձրացըրի:

**ՄԼԻՑԿԻ.**—Բնաւ: Բայց ես այս բնակարանը վաղը թողնում եմ:

**ԶՋԱՐՄԿԻ.**—Այս: Հըմ... (Հանում է պօտ-մօնէն): Մեր հաշիւները վերջացնենք: Ահա այն փողերը, որ երեկ ինձ փոխ տուիր: Շատ շնորհակալ եմ քեզանից: (Բարձրանում է տեղից, մի րոպէ մտք ընկնում): Ինձ համար շատ անխորժ: Է, որ մենք այսպիսի հանգամանքներումն ենք իրարից բաժանւում: (Ըստթիւն): Մըտակից և բարի ընկիր էիր դու. քեզ կետ անձուանալի ըսպէներ եմ անցկացըրել... Ափսոսում եմ քեզ... (Ընդհատում է: Լորութիւն):

**ՄԼԻՑԿԻ.**—(Բազմոցի վրայ նստած՝ մոալ կերպով նայում է դէպի տարածութիւնը):

**ԶՋԱՐՄԿԻ.**—Ուրեմն վաղը Հելային ձգում ես, որպէս զի ապրես մի կուոջ հետ, որ չգիտես նոյն իսկ, թէ սիրում է քեզ արդեօք...

**ՄԼԻՑԿԻ.**—(Չարմացած): Չգիտեմ, թէ սիրում է ինձ արդեօք:

**ԶՋԱՐՄԿԻ.**—Ինձ այնպէս է թւում, թէ գիտես, որ սիրոյ ոյժը, ինչպէս առասաւարակ իրաբանչիւր ոյժ, սահմանափակուած է: Այդ կինն առաջին անգամն է միայն սիրել և այդ սիրոյ մէջ գործադրել է իր հոգեկան ոյժերի այն պաշարը, որով ինքը սիրել է և որ հէնց իր՝ այդ կողմէ կորստեան պատճառ դարձել: Նա, առանջուած ու յոզնած, ձեռքից-ձեռք է անցել, գուցէ միայն նրա համար՝ որ մոռանայ իր սրտի դատարկութիւնը: Դու նրա վրայ համեմատաբար ամենաութեղ տպաւորութիւնն ես թողել: Բայց համեմատաբար... համեմատաբար...

**ՄԼԻՑԿԻ.**—(Ատելութեամբ նայում է: Նրան եւ ծիծարում):

**ԶՉԱՐՄԿԻ.**—Ծիծաղմում ես: (Սառը): Ինչու ես կոմեդիա խաղում: Քո ծիծաղը կեղծ է: Դու վախենում ես ինձանից:

**ՄԼԻՑԿԻ.**—Ես: Քեզանից:

**ԶՉԱՐՄԿԻ.**—Այս...

**ՄԼԻՑԿԻ.**—Ինչու ես այդպէս կարծում: Զի՞նի՞ն նրա համար, որ մինչեւ այժմ քեզ այստեղից դուքս չեմ արել:

**ԶՉԱՐՄԿԻ.**—Գուշակեցիք:

**ՄԼԻՑԿԻ.**—Այդպէս չվարուեցի միմիայն այն պատճառով, որ կամենում էի զինաթափ անել քո մէջ գտնուող ստուանային:

**ԶՉԱՐՄԿԻ.**—Եւ այդ աջղողուեց քեզ:

**ՄԼԻՑԿԻ.**—Թուում է, որ ոչ:

**ԶՉԱՐՄԿԻ.**—(Շատ լուրջ): Ուրեմն լսիր: Արա, ինչ որ կամենում ես, եղիր բախտաւոր կամ անբախտ, —այդ բոլորովին մինոյն է ինձ համար, —բայց եթէ Ելենան ծայրայեղ յուսահատութեան բոպէին վերջ դնէ իր թշուառ կեանքին...

**ՄԼԻՑԿԻ.**—(Կատաղութիւնը զսպելով): Այդ գէպքում մեղաւորը միմիայն դու կը լինես, դու, դու: Դու ես նրան հրել գէպի այդ անմիտ սարսափի յորձանուածը... դու ես բացել նրա առջեւ այդ վիճը... Ամբողջ երկու օր աղդում էիր նրա զղերի վրայ: Դու Ելենայի մահն ես ցանկանում, որպէսզի վրէժինդիր լինես: Օ՛քայից...

**ԶՉԱՐՄԿԻ.**—Անհեթեթ բաներ մի ասիլ: Շատ ես վրդովուած: Բայց յիշեր, որ եթէ Ելենան ինքնառապանութիւն գործի... իսկ նա անկասկած կանէ այդ...

**ՄԼԻՑԿԻ.**—(Վայրինաբար): Ինչից դիտես:

**ԶՉԱՐՄԿԻ.**—Դէն, միաս բարով: Ես պէտք է գնամ:

**ՄԼԻՑԿԻ.**—Սպասիր: Իսկ եթէ... եթէ... յետոյ լինչ...

**ԶՉԱՐՄԿԻ.**—Յետո՞յ: Դա արդէն քո գործն է:

**ՄԼԻՑԿԻ.**—Իսկ եթէ դրա հետ էլ մի կերպ յարմարութմ:

**ԶՉԱՐՄԿԻ.**—Չես կարող:

**ՄԼԻՑԿԻ.**—Կարող եմ:

**ԶՉԱՐՄԿԻ.**—Բանու էլ հէնց այն է, որ ոչ... Դրա մէջն է իմ ամբողջ վրէժը:

**ՄԼԻՑԿԻ.**—Ք՞ո:

**ԶՉԱՐՄԿԻ.**—(Բուռն կերպով): Այս, իմ... իմ...

**ՄԼԻՑԿԻ.**—(Նայում է նրան սպոռ աքրեռով): Ինչ վաստ բան եմ արել քեզ:

**ԶՉԱՐՄԿԻ.**—Դու: Ոչինչ:

**ՄԼԻՑԿԻ.**—Ապա ուրեմն ինչու ես վրէժ լուծում: Զէ որ այդ գէպքում տուժողը միայն ես եմ լինելու: Միմիայն ես...

**ԶՉԱՐՄԿԻ.**—Ինձ համար շատ անախորժ բան է, որ, իմ վըրիթառութեան գէպքում, դու էլ ես տուժելու... Յիշիր... Ելենային մի ձգիլ... Ողջ եղիք: (Դուրս է զնում):

### 3) ՄԼԻՑԿԻ ՄԻԱՅՆԱԿ, ԱՊԱ ԵՒ ԵԼԵՆԱ

**ՄԼԻՑԿԻ.**—(Կանգնած է սենեակի մէջտեղ՝ անվճռական): Գնում է դէպի դուռը. Նորից կանգ առնում, մտածում է մի ինչ-որ բանի մասին, յանկարծ դուռը բաց է անում եւ կանչում է): Հելմա: (Մի բոպէից յետոյ գակարը դուռը բաց է Ելենան թիչ: Որորուելով, նայում է Մլիցկուն: Երկար լութիւն: Մլիցկին ման է զալիս սաստիկ յուզուած, եւ զայանաբար ծամում է ծխախոտի թղթէ ծայրը): Հելմա, անջատուենք իրարից իրքև բարեկամներ:

**ԵԼԵՆԱ.**—Ինչպէս կամենաս:

**ՄԼԻՑԿԻ.**—Ի սէր Աստուծոյ, թանկագինս, հասկացիք՝ այս ամենը:

**ԵԼԵՆԱ.**—Ես բոլորն էլ հասկացել եմ:

**ՄԼԻՑԿԻ.**—(Անհատատ ձախով): Չեմ ուզում, որ մեր անջատումից յետոյ մեր մէջ վատ գգացումն ու զայրոյթը բոյն գնի: Դու ինձ համար շատ թանկ ես: Ինչու պիտի ատես ինձ: Այլ կերպ չէի կարող վարուել: Եթէ նոյն իսկ ուզենայի, այլևս չէի կարող յետ նահանջել, որովհետեւ այդպիսով կը փշքէի իմ ամենող կեանքը: Ես քո եղբայրը կը լինեմ, կօգնեմ ու կը հոգամքեզ համար:

**ԵԼԵՆԱ.**—(Առում է, յետոյ իր յուսահատութիւնը ծածկելով): Եւ ինձ շատ, շատ փող կը տամա: (Մտքի մէջ է ընկնում): Իսկ Ես ինչ տամբիկ այդ ամենի փոխարէն: Քեզ տուել եմ իմ հոգին, իմ մարմինը: (Երկար նայում է նրան): Ես քեզ տուել եմ, Ստեփան, իմ անսարատ մարմինը: Այնպէս անարատ, որպէս մի մանկան: Մինչեւ քեզ հանդիպելիս՝ չգիտէի, թէ ինչ է մարմինը...

**ՄԼԻՑԿԻ.**—(Նայում է նրան սարսափահար):

**ԵԼԵՆԱ.**—Այս, Ստեփան, ես մաքուր եմ եղել, և ինձանում եղած ամեն ինչ քոնն է եղել՝ մտքերս, սիրտս, հոգիս, մարմինս, իւրաք անչիւր մի ջիղ... (Աւժգին): Դու յետ մղեցիր այդ բոլորը: Դրանք քեզ համար զզուելի դարձան: Արդ՝ ինչ պիտի տամ քեզ այն օգնութեան ու հոգացողութեան փոխարէն, որ խոստանում ես

ինձ... ես այլիս հարկաւոր չեմ քեզ. դու արհամարհում ես: Ուշը այլիս ի՞նչ: Ի՞նչ...

**Մլիթկի.**—Խղճա, Հելա, խղճա. այդպէս չարաչար մի տանչիլ ինձ:

**ԵլենԱ.**—(Չգուռմ, ուղղում է, խտերիկական ծիծաղով): Ինձ հարկաւոր չէ քո օգնութիւնը: Զեմ ուղում: Գնա նրա մօտ: Բաժանիր ուրիշների հետ միասին նրա սիրոյ վերջին կեզտոտ ցեղը...

**Մլիթկի.**—(Բռնում է նրա ծեռքը եւ ճգում): Ասիր, լոիր, ապա թէ ոչ....

**ԵլենԱ.**—(Դուրս պրծնելով նրա ծեռքից): Զեսք մի տալ ինձ: Ի՞նչ ես ուղում ինձանից: Ի՞նչ ես ուղում. հա-հա-հա-հա... կամենում ես հանգիստ խիղճ ունինալ. կամենում ես ինքդ քեզ ասել՝ «Ելենան հսազանդուեց իր վիճակին: Ելենան զոհ կը լինի, կը բաւականանայ անձնուիրութեամբ»: Ուղում ես խիզդդ խարել.

**Մլիթկի.**—(Նայում է նրան մի վայրկեան, ապա ուժգին): Այն. ինձ հետ ապրելով դու արդէն երջանկութեան վայելքն զգացել ես. այժմ էլ ես եմ երջանկութիւն կամենում ինձ համար: Քեզ հետ ապրելով երջանկութիւն չգտայ:

**ԵլենԱ.**—(Խելազարի պէս նայում է նրան): Ինձ հետ ապրելով երջանկութիւն չգտար: Ուրեմն, դու երկու տարի ստել ես, ստել ես ամեն օր:

**Մլիթկի.**—Ո՛չ, չեմ ստել: Այն ժամանակ ես կարծում էի, որ մեր անցկացրած կեանքը երջանիկ կեանք էր, որովհետեւ ուշրիշ կեանքի մասին գաղափար չունէի:

**ԵլենԱ.**—(Նրան փաթաթուելով): Բայց այժմ կերջանկացնեմ քեզ... Ապրիր ինձ հետ. կերջանկացնեմ քեզ: (Արազութեամբ, զբեթէ անգիտակցար): Քեզ այնպիսի հաճոյք, վայելք կը տամ, որոնց մասին նոյն իսկ չես էլ երազել: Այն, քեզ վայելք, գրախտ կը տամ, կը տամ, միայն թէ ինձ դէս մի մղիլ, մի հետացնիլ... Մնա... Տեսնում ես, ինչպէս եմ սարսափում, երկիւղ կրում... Առանց քեզ կը խելագարուեմ... Ո՛չ, ոչ... Դու էլ կը խելագարուես: Զէ որ այդ կինն ուրիշների սիրուհին է եղել, ձեռքից-ձեռք է անցել... (Ընկնում է, ծնկաջրը դուռը ծեծում են: Նինան զիր է կմում եւ պատին յննում: Մլիթկին սարսափանար՝ գուանն է նայում մի վայրկիան):

**Մլիթկի.**—(Խոպոտ ձայնով): Մտէք:

#### 4) Միեհինոթն Անջինք եի ՕլգԱ.

**ՕլգԱ.**—(Ներս է զալս՝ ուրախ, զուարթ, փայլվուն): Ահա քեզ սիւրպրիզ... (Նկատում է Նլենային, կանգ է առնում եւ զարմացած նայում նրան, ապա Մլիթկուն: Մի բոլէ ծանր լութիւն է տիրում):

**ԵլենԱ.**—(Վաղում է դէպի նրանց եւ՝ խօսք զտնելով՝ ցոյց է տալս Օլգային): Այս է, այս...

**ՕլգԱ.**—(Զարմացած): Ի՞նչ է ուղում...

**Մլիթկի.**—Հելա, խնդրում եմ, խայտառակութիւն մի սարքիլ... (Օլգային վճռողաբար): Գնանք:

**ԵլենԱ.**—Դուրս գնացէք: Դուրս կամենում էք փշացնեան այնպէս, ինչպէս որ կորստեան էք մատնել Զջարսկուն:

**ՕլգԱ.**—Ի՞նչ էք կամենում ինձանից: Ես ոչ ոքի չեմ ուղում սպանել...

**ԵլենԱ.**—(Աղերսանքով դիմում է Մլիթկուն): Մնա, մնա: Ես քո շունը, քո գամփուը կը լինեմ: Վարուիր ինձ հետ այնպէս, ինչպէս կամենում ես: Ծեծիր, թակիր ինձ, արա ինչ որ կուզես, միայն մի թողնիլ ինձ: (Օլգային): Գնացէք, գնացէք: Ես երկու տարի նրա հետ եմ ապրել, նա իմն է... իմն է... Դուք նրանցից շատ կը գտնէք. իսկ ես միայն մի Ստեփան ունեմ. թողէք նրան ինձ: Ես կը խելազարուեմ: (Օլգան մի վայրկեան նայում է Նլենային, ապա Մլիթկուն եւ դուրս գնում: Նրա ետեւից գնում է Մլիթկին: Նլենան նայում է նրան մոլորուած աչքերով, պարզում է ձեռքերը դէպի նրան եւ բնազդաբար յետ նահանջում... Օլգայի եւ Մլիթկու հեռանալուց յետոյ՝ Նլենան խելազարի պէս այս-այն կողմն է նայում, վազում դէպի դուները եւ դետնի փրայ վայր ընկնում):

Վ Ա Բ Ա Գ Ո Յ Ռ

## Դ Ա Բ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն Գ.

**Մի օր անցած:** Մեծ ճաշակով կահաւորուած հիւրասենեակ: Երեկոյ է: Հուսամիոփով ծածկուած մի լամպ լուսաւորում է սենեակը:

### 1) ՕԼԳԱ, ՅԵՏՈՅ ՄԼԻՑԿԻ

**ՕԼԳԱ.**—(Ընկողմանկ է օսմանեան բազմոցի վրայ: Ռոպէ առ րոպէ կիսով չափ բարձրանում է եւ ականջ դնում: Դրսից քայլերի ճայն է լսում: Ներս է զալիս Մլիցկին՝ սաստիկ վհատուած. զիսարկը վիսից չի վերցնում: Օլգան տեղից բարձրանում է), Վերջապէս եկար:

**ՄԼԻՑԿԻ.**—Զջարսկին եղթէլ է այստեղ:

**ՕԼԳԱ.**—(Շփոթուած): Ի՞նչ է պատահել քեզ: Գլխարկդ վերցրու: Հիւմնդ ես:

**ՄԼԻՑԿԻ.**—(Գլխարկը վերցնում է): Ոչինչ, ոչինչ, ինձ ոչինչ չի պատահել... բայց այս աշնանային քամին, այս անձրեց... Անցնում էի քաղաքային պարտէզով, և քամին սուլում էր լերկ ճիւղերի միջով... Ասում են, թէ այսպիսի երեկոները մէկն անպատճառ խեղդամահ կը լինի... հէ-հէ... կամ ջուրը կընկնի: Զէ որ մարդիկ կամ, որ ջուրն են ընկնում, խեղդում: Հէ-հէ: Վեր առ լամպի վրայի այդ լուսամփոփը, որովհետեւ ինձ այնպէս է թւում շարունակ, թէ մէկը մերձ ի մահ պառկած է:

**ՕԼԳԱ.**—(Լուսամփոփը վերցնում է. մի րոպէ յիտոյ): Միթէ անհրաժեշտ էր, որ մինչև երեկ Ելենան քեզ մօտ ապրէր...

**ՄԼԻՑԿԻ.**—Հապա հւը գնար:

**ՕԼԳԱ.**—Զէ որ գրել էիր ինձ, թէ նրա հետ խզել ես բոլոր յարաբերութիւններդ:

**ՄԼԻՑԿԻ.**—(Լոռում է).

**ՕԼԳԱ.**—Ինչու ուրիշ բնակարան չես վերցրել...

**ՄԼԻՑԿԻ.**—Որովհետեւ երկիւղ էի կրում, որ նա ինքնասպան կը լինի:

**ՕԼԳԱ.**—Նա քեզ ինքնասպանութեամբ է սպառնացել:

**ՄԼԻՑԿԻ.**—Բայց անկասկած անձնասպան կը լինի:

**ՕԼԳԱ.**—(Ուժեղ): Հէսց թէկուզ անձնասպան լինի: Ի՞նչ կայ: Զէ որ այդպիսով թէ իր և թէ քո դրութիւնը կը թիթեանայր Միթէ դու այնքան միամիտ ես, որ մահը գերադասում ես տանջանքով և չարչարանքով լի կեանքից: Քո ասելով՝ նրա համար երջանկութիւն չկայ այլևս: Արդ՝ եթէ այդ ճիշտ է, ուրեմն էլ ինչ միտք ունի տանջուելը: (Յանկարծ): Ելենային ասել ես, թէ սիրում ես իրեն:

**ՄԼԻՑԿԻ.**—Ոչինչ չգիտեմ: Քեզ հետ ծանօթանալուց առաջ ոչ ոքի չեմ սիրել:

**ՕԼԳԱ.**—Իսկ այդ քեզ երջանկութիւն չբերեց: Եւ այդ հանգամանքը քեզ չերջանկացրեց:

**ՄԼԻՑԿԻ.**—Ինչու ես հարցնում:

**ՕԼԳԱ.**—Ինչու... Զէ որ տեսնում եմ, թէ քեզանում ինչ է կատարում: Ամբողջ օրը քեզ չեմ տեսել: Ո՞ւր նս եղել: Ինչպէս գունատ ես: Աչքիդ տեսիներ են երկում: Այնպէս ես վախենում, որ կարծես թէ ուրուականների մի ամբողջ լեգէօն կայ այստեղ: Վամպիրների ամբողջ լեգէօններ ես բերել քեզ հետ: Սենեակը լի է տեսիներով: Աստուած իմ, Աստուած իմ... Զգում նս արդեօք, որ քեզ հետ եմ: Ոչ, ոչ: չես զգում: Նրա մասին ես մտածում միայն, շարունակ նրան տեսնում քո առջեւ: Մեր շուրջն ամբողջապէս լի է նրա ուրուականներով ու ստուերներով...

**ՄԼԻՑԿԻ.**—Միթէ չես հասկանում, որ ես հիմք տնեմ նրա կեանքի մասին երկիւղ կրելու...

**ՕԼԳԱ.**—(Հաստատ): Ոչ: Զեմ կարող հասկանալ և երբէք էլ չեմ հասկանալ: Երբ մենք մի անդամ վճռել ենք թողնել մի որևէ անձի կամ մի որևէ բան, այլ ես կարիք չկայ յետ նայելու: Ինձ համար՝ բոլորվին օտարութի ու անհասկանակի է քո այդ հոգածութիւնը: Ասում ես, որ առաջ ոչ ոքի չես սիրել: Դու ինձ սիրում ես և զիտես, թէ ես ինչպէս եմ քեզ սիրում: Այդ գիտակցութիւնը քեզ պիտի երջանկացնի: Դու պարտաւոր ես ամեն ինչ մոռանալ: Յիշում ես, իմ մեկնելու ժամանակ ասում էիր, թէ ինձ համար կարող ես ամենամեծ ոճիր գործել... Բայց այժմ, երբ նրան ձգել՝ թողել ես, —իսկ ինչ է եղել նա քեզ համար, —այժմ գողում ես, գողում ամբողջ մարմնով և յուսահատում: Աստուած իմ, Աստուած իմ... Միթէ երկրուս էլ սխալուել ենք: Ես հաւատացած էի, որ անցեալն ամբողջովին կը մոռանամ և ներկայ երջանկութեան մէջ կը թաղես: Զէ որ քեզ հետ եմ ես,

բոն եմ, քոնն եմ յաւիտեան... Սակայն այլ կերպ եղաւ, այլ կերպ... (Լոռվթիւն):

**Մէկի 84հ.**—(Խորը մտածունքի մէջ ընկած նայում է դէպի տարածութիւնը):

**ՕլգԱ.**—(Մի րոպէ յետոյ յոպնած ծայնով): Ճանապարհ ընկել գալիս էի քեզ մօտ ցերեկ ու գիշեր, անդադար. ոչ մի տեղ չետ հանգստացել. մի օր աւելի վաղ եմ եկել, քան քեզ գրել էի: Ինձ թւում էր, թէ դրանով քեզ շատ կուրախացնեմ... Այս, այն, սիւրպիկ էր... Երբէք չեմ մռանալ. թէ ինչպէս դու ճնշուած ու վատուած կանգնել էիր այնտեղ, ոչ մի բան չէիր զգում և մոլորուած աջերով նայում էիր ինձ, կարծես. թէ ուրուական լինէի: Աւելի շուտ՝ կը գերադասէիր, որ գետինը պատռուէր մէջը գլորուէիր, քան ինձ տեսնէիր...

**Մէկի 85հ.**—(Նրան ընդհատելով): Քո կարծիքով, աւելի լաւ կը լինէր, եթէ... եթէ խայտառակութիւն պատահէր...

**ՕլգԱ.**—(Աւժին): Դու պարտաւոր էիր հանգոյցը մի անգամից կտրել: Երկու ամիս ժամանակ ունէիր իմ և Ելենայի միջև ընտրութիւն անելու: (Ընդհատում է եւ ուշադրութեամբ նայում Միջկուն: Փոխուած ծայնով): Էսիր, Ստեփան, դու գեռ կարնղ ես ընտրութիւն անել: Եթէ զգում ես, որ ինձ հետ երջանիկ լինել չես կարող, այն ժամանակ գնա: Չեմ ուզում ապրել մի մարդու հետ, որ շարունակ յուսահատ գրութեան մէջ պիտի մտածէ: Թէ մի գուցէ իր նախկին սիրած կինն ինքնասպանութիւն գործէ: (Խանդով): Չեմ ուզում բաժանել իմ երջանկութիւնը մի այլ կնոջ հետ: Չեմ ուզում, որ որևէ մէկը գիշեր-ցերեկ կանգնած լինի իմ և քո միջն:

**Մէկի 86հ.**—Բաժանմէլ... Հըմ... (Նայում է նրան): Չես ուզում բաժանմէլ... Չես ուզում, որ որևէ մէկը գիշեր-ցերեկ կանգնած լինի մեր միջնէւ: (Չերքով ճակատը շփում է):

**ՕլգԱ.**—(Վախեցած): Ի՞նչ է պատահել քեզ: Էսեցիր, ինչ որ ասացի: Համացածք: Չեմ ուզում ապրել քեզ հետ, մինչև որ նրան չմոռանաս:

**Մէկի 87հ.**—Բոլորը հասկացայ... ամեն ինչ կը մոռանամ, նոյն իսկ... (Ընդհատում է եւ նայում նրան): Իսկ այդ դժուար է, ու բովհետև շատ բան պիտի մոռանամ, շնտ: (Իրեն տիրապեսովով վերցում է Օլգայի ձեռքը): Քիչ համբերիր միայն: Ես այնքան էլ առողջ չեմ: Տարօրինակ բան, մտածում եմ բոլորովին պարզ: ուղղում ասում է նոյնը, ինչ որ մի թոպէ ասած դու էիր ասում:

Գիտեմ, որ առանց քեզ չեմ կարող ապրել: Գիտեմ, որ մահը նըրա համար երջանկութիւն կը լինի... Բայց և այնպէս... Կայծես թէ ես մի տեղ մի այլ ուղեղ ունեմ, և այդ ուղեղս բոլորովին այլ կերպ է խորհում և ինձ ծալլորում է, հոգիս այրում ու հանում: Այս, օրինակ, այսօր: Ես նրան որոնում էի ամբողջ քաղաքում... Բը նակարանում չկար... Կորել է... Կը նշանակէ՝ ինքնասպանութիւն է գործել... ասում է իմ խելքը: Բայց հէնց այդ բոպէին և եթ իմ ոյժերը դաւաճանեցին ինձ, ոտքերս սկսեցին թուլանալ, ծաւուել...

**ՕլգԱ.**—(Ընդհատում է): Իսկ ուր է մեր երջանկութիւնը, ուր: Ինչպէս ցանկանում էի քեզ հետ ապրելու երջանկութիւնը վայելել: Ինչպէս գողում էի, մտածելով որ երկու օրից յետոյ մի նոր կեանք կը սկսուի... այնպիսի աննկարագրելի գեղեցիկ կեանք...

**Մէկի 88հ.**—(Յողնտօն ձայնով): Մի տանջիլ այժմ ինձ: Այս աւմենը կանցնի: Նախ հարկաւոր է, որ քիչ սթափուեմ: Անցեալն այդպէս հեշտ չի կարելի սրտից հանել ու դէն գցել:

**ՕլգԱ.**—(Խանդով): Կարելի է, կարելի: Եթէ սէր կայ, պատահեն ինչ կարելի է:

**Մէկի 89հ.**—Դու հեշտ-հեշտ ես խօսում, որովհետև ճանապարհիդ վրայ ոչ մի խոչընդոտ չի եղել:

**ՕլգԱ.**—Դու շատ ես տանջուել:

**Մէկի 90հ.**—(Զի պատասխանում):

**ՕլգԱ.**—Եւ իմ ասածը կատարելը քո ոյժերից բարձր է:

**Մէկի 91հ.**—(Յանկարծ): Ասա, ինդրեմ, իրօք սիրում ես ինձ այնպէս, ինչպէս ասում ես:

**ՕլգԱ.**—Կասկածում ես:

**Մէկի 92հ.**—Ո՛չ, չեմ կատածում... սակայն, յիմարութիւններ են... Ես յիշեցի յանկարծ առաջին տպաւրութիւնը: Այն ժամանակ այնպէս յոգնած, այնպէս սառն էիր...

**ՕլգԱ.**—(Ընդհատում է): Ո՛չ, ոչ, դա ճիշտ չէ, դա քո առաջին տպաւրութիւնը չէ... (Տիւուր նայում է նրան): Քո սէրն այժմ այն չէ, ինչ որ առաջ էր: Նրա մէջ այժմ այլ լարեր են հնչում: Ես այդ սէրն այնպէս չեմ զգում, ինչպէս առաջ... Դու կասկածում ու հետեւում ես ինձ, ըննադատում ես իւրաքանչիւր բառ... (Կասկածով): Զարսկին է ազդել քեզ վրայ: Օ՛, ինչպէս պարզ լսում եմ նրա խօսքերը. ինչպէս զգում եմ ամբողջ այն թոյնը, որով նա թունաւորել է քո սէրը:

ՄԼԻՑԿԻ. — Ասա, խնդրեմ, Զջարսկին ինչո՞ւ այդպէս խելաշնոր կերպով ատում է քեզ:

ՕԼԳԱ. — Ուզում էր, «ո՞ ինչ էլ լինէր՝ ես իրեն հետ ապրեմ... Ստեփան, խնդրեմ, անկեղծօրէն ասա, թէ Զջարսկին ի՞նչ է ասել իմ մասին: Ասա ինձ ամբողջ ճշմարտութիւնը...»

ՄԼԻՑԿԻ. — Ուշինչ չի ասել: Մի բան գուցէ... (կմխում է, ապա խոպոտ ծախով): Շատ էիր սիրում նրան:

ՕԼԳԱ. — Ո՞ւմ:

ՄԼԻՑԿԻ. — Երան՝ Պրետվիցին:

ՕԼԳԱ. — (Զեռքերը կոտրում է): Ուրեմն այդ էլ, Աստուածիմ: Ի՞նչ դժբախտութիւն է: Այդպէս, ուրեմն, դա ցնորք, երազ էր միայն... (Ընկծուած ծախով): Ո՛չ, Ստեփան, ոչ. ուրուականների հետ կոռւելու ոյժ չունեմ ես: Ոյժ չունեմ քըքքելու այդ յէշողութիւնների կեղալը: Զեմ ուզում զարթեցնել նրանց: Գիտեմ, բոլորովին պարզ և ուժեղ կերպով զգուժ եմ, որ երբէք չես մռանալ իմ անցեալը և յաւիտեան կը տանջուես: Ո՛չ, ոչ, ոչ: Ինըըդ էլ տեսնում ես, որ մեզ համար երջանկութիւն չկայ:

ՄԼԻՑԿԻ. — (Բռնում է նրա ծեռքերը, համբուրում եւ Օլգային իր կրծքին սեղմում): Ո՛չ, Օլգա: Ի՞մ յիշողութեան մէջ երբէք չի զարթնիլ քո անցեալը: Ամեն ինչ կը մոռանամ: Սրտից դուրս կը քաշեմ քո ամբողջ անցեալը, երջանիկ կը լինեմ և քեզ էլ կերջանկացնեմ: (Մի բովի յիտոյ): Ես այնպէս եմ սիրում քեզ... Դէս, ժպտիր, ասա, որ երջանիկ ես դու:

ՕԼԳԱ. — (Ծիծաղում է աւելի եւ աւելի):

ՄԼԻՑԿԻ. — Կեղծ է այդ ծիծաղդ:

ՕԼԳԱ. — Սակայն չէ որ ծիծաղում եմ: Եւ ծիծաղում եմ բոլոր սրտից թէ ինձ վրայ, թէ քեզ և թէ քո հոգսերի ու թուլութեան վրայ... Միթէ իրաւունք չունեմ... Դու քիչ թոյլ ես և, գուցէ, շատ զգայուն: Թերես, խոստովանիր, շատ հոգսեր, անախորժութիւններ ես կըել և վախենում ես... (Նայում է նրա աչքերին):

ՄԼԻՑԿԻ. — Ծիծաղում ես ինձ վրայ:

ՕԼԳԱ. — Ո՛չ, ի՞նչ ես ասում: (Լոռութիւն):

ՄԼԻՑԿԻ. — (Խոյս է տախս նրա հայեցքից եւ չի պատասխանում):

ՕԼԳԱ. — (Տյուր ժպտով): Ի՞նչ էի երազում և ի՞նչ կտայ: Իմ փնտուածն ուրեմն ցնորք, երազ էր...

ՄԼԻՑԿԻ. — Խաբումծ ես զգում քեզ:

ՕԼԳԱ. — (Չի պատասխանում: Լոռութիւն):

ՄԼԻՑԿԻ. — (Յանկարծ, սաստիկ անհանդառնամբ): Գիտես, Զջա-

րսկուն հանդիպեցի այսօր: Նա գէմքը սաստիկ ծամածուեց և յայտնեց, որ այսօր մեզ այցելութեան է գալու: (Յանկարծական սարսափով): Նա անպատճառ դժբախտութիւն կը բերի, դժբախտութիւն կը բերի... Զգում եմ, թէ դժբախտութիւնն ինչպէս մօտենում է մեզ... Գիտես, Օլգա, Զջարսկին եթէ գայ այստեղ, ասա, որ տանը չեմ... կամ, ոչ, ասա ուղղակի, որ չեմ կամենում նրան տեսնել: Այս, ամենից լաւն այդ է: Ասա, որ առհասարակ չեմ կամենում տեսնել նրան... Այդ անձը սատանայի մարմնացումն է ուղղակի և ոչ թէ մարդ: (Զանգի սաստիկ հնչիւն է լաւում: Մլիցկին դռանն է նայում սարսափանար): Դժբախտութիւնն է... գալիս... դժբախտութիւնը...

ՕԼԳԱ. — (Նոյնպէս սարսափանար): Դա Զջարսկին է: Գնա միւս սենեակը, գնա: Կասեմ նրան, որ զնացել ես և չես ուզում նրա հետ տեսնուել... Գնա, գնա: (Զանգը երկրորդ անգամն է հնչում: Օլգան գնում է դէպի դուռը՝ Մլիցկուն նշան անելով, որ հեռանայ):

## 2) ՆՈՅՆ ԱՆՁԻՆՔ ԵՒ ԶՋԱՐՄԿԻ

ՄԼԻՑԿԻ. — (Մնում է տեղին ու տեղը կանգնած, աչքերը լայն բացած նայում է զոանը: Մի վայրկեանից յիսոյ դուռը բացւում է եւ ներս է զալիս Օլգան, նրա ետեւից Զջարսկին): Ա՛... Զջարսկի... իբօք...

ԶՋԱՐՄԿԻ. — Ի՞նչ չեմ ճանաչում ինձ...

ՄԼԻՑԿԻ. — (Յանկարծ տիրապետում է իրեն, յիսոյ ջղային կերպով ծիծաղում): Գլխումս ամեն ինչ խառնուել, շփոթուել է: Գլուխս այնպէս սաստիկ է ցաւում, որ քիչ է մնում ուղղակի խելագարուեմ... (Շփում է նակատը): Երբ զանգը հնչեցրէր, ինձ այնպէս թուաց, թէ հառաչեցին բոլոր զանգակները... (Նայում է Զջարսկուն): Տարօրինակ գէմք ունես դու այսօր:

ԶՋԱՐՄԿԻ. — Այդ քեզ թւում է:

ՕԼԳԱ. — (Անհանգստութեամբ Ստեփանին): Գնա մի քիչ հանգստացիր... Անհրաժեշտ է քեզ այդ հանգստութիւնը... Գուցէ գըլ-խացաւդ անցնի:

ՄԼԻՑԿԻ. — Այս, այս. ճիշտ ես ասում... մի բռպէով պառկեմ... անստիպերին կընդունեմ: (Զջարսկուն): Ի հարկէ, կը ներես ինձ... (Մլիցկին դուրս է գնում):

3) ՕԼԳԱ. ԵՒ ԶԶԱՐՄԿԻ

**ԶՅԱՐՄԿԻ.**—(Մի բոպէ յետոյ): Շուտով ճանապարհ կընկնէք,  
կարծեմ:

ՕԼԳԱ. — Այս. Հէնց որ ճնար լինի:

**ԶՅԱՐՄԿԻ.**—Մլիցկու համար անախորժ է այստեղ աւելի  
երկար մնալ: Հէ-հէ. հաւատում եմ, հաւատում...

ՕԼԳԱ. — (Ուշադրութիւն զդարձնելով): Այստեղ ոչինչ չկայ անե-  
լու: Պարիզ ենք գնալու:

**ԶՅԱՐՄԿԻ.**—(Ծիծաղում է): Շատ լաւ քաղաք է...

ՕԼԳԱ. — (Ծաղրով): Խսկապէս... (Առութիւն):

**ԶՅԱՐՄԿԻ.**—Մլիցկին, երկի, այնտեղ ուշքի կը դայ:

ՕԼԳԱ. — Անշուշտ:

**ԶՅԱՐՄԿԻ.**—Ե՞ս. այդ «անշուշտը» գեռ կասկածելի է:

ՕԼԳԱ. — (Սառը եւ հպարտ): Յատկապէս ի՞նչ նպատակով ես  
եկել այստեղ:

**ԶՅԱՐՄԿԻ.**—(Թունափց հնդութեամբ): Ինչո՞ւ յանկարծ այդ ա-  
նախորժ եղանակով խօսեցիր...

ՕԼԳԱ. — (Ատելութեամբ): Կամենում ես մեր վերաբերմամբ չար-  
խղճի դիմը կատարել...

**ԶՅԱՐՄԿԻ.**—Գուցէ...

ՕԼԳԱ. — Ուրիշ բան էլ չէի սպասում քեզանից... Դու՛ խղճի  
նման՝ ստոր ես, խորամանկ և նենդամիտ:

**ԶՅԱՐՄԿԻ.**—(Յանկարծ նրա երեսին ծիծաղում է): Հրաշալի է ա-  
սուած: Ստոր, խորամանկ և նենդ խիզճ. դա արտակարգ, հրէ-  
շային բան է: Հէ-հէ: Դու խելօք ու հպարտ կին ես: Բայց խիլքդ,  
գուցէ, այնքան էլ սուր չէ, հասկանալու համար թէ խիղճը կա-  
րող է մի այլ բան էլ լինել... Մլիցկին քեզանից աւելի լաւ գիտէ  
այդ:

ՕԼԳԱ. — (Ատելութեամբ լի աքերով ջափում է ԶՅԱՐՄԿՈՆ ոտքից-  
զլու): Միթէ կարող էի քեզ նման մի մարդու նկատմամբ թէ-  
կուզ ամենափոքր համակրանք զգալ: Որքան անսահման կերպով  
միամիտ եմ եղել ես: Այժմ առաջին անգամն եմ զգում, թէ  
որքան գծուծ մտածող ես գու և որքան ստոր, ցինիկ զգացող:

**ԶՅԱՐՄԿԻ.**—Զարժանալի կերպով զիմակաւորում ես քո երկիւ-  
ղըն ու յուսահատութիւնը: Եւ տարօրինակ բան. դուք՝ յառաջադիր-

մութեան մարդիկը այդ խորամանկ և նենդ խղճից սարսափում էք,  
չափաղանց սարսափում:

**ՕԼԳԱ.**—Մարսափէլ: Երբէք: Տարօրինակն այն է, որ պարոն  
Զյարսկին խղճի մասին է խօսում: Ամաչիր այդպիսի ստոր ստից:  
Քեզանում ոչ թէ խիղճը, այլ վրէմն է խօսողը: Դու կամենում ես  
ինձանից վրէժ լուծել: Զգիտեմ՝ ինչու համար: Սակայն այդ չի  
էլ հաւաքրը ըստ ինձ... Հէնց այդ նպատակով էլ տեղափոխուել  
ես Մլիցկու բնակարանը և սկսել ես զինել Ելենային Ստեփանի  
դէմ, և այս վերջնիս էլ՝ իմ:

**ԶՅԱՐՄԿԻ.**—Ինչպէս տեսնում եմ, շատ լաւ յայտնի է ամեն  
ինչ քեզ: Խեղձ Ստեփանիկը քեզ գանգատուել է:

**ՕԼԳԱ.**—(Նրան ընդհատում է): Դու կամեցել ես խախտել Ստե-  
փանի սէրը: Կամեցել ես պատուաստել նրան քո թոյնը: Գիտես,  
դու, որպէս թունաւոր սարդ...

**ԶՅԱՐՄԿԻ.**—Շատ շնորհակալ եմ: Շատ ուրախ եմ, որ ըստ  
արժանոյն գնահատել ես Ստեփանի վրայ իմ ունեցած աղղեցու-  
թիւնը: (Ծիծաղում է օտարութիւն): Նա Պրետվիցի մասին խօ-  
սել է քեզ հետ: Ստեփանը նրան շատ է խղճում:

**ՕԼԳԱ.**—(Չայնը բարձրացնելով): Խնդրում եմ՝ ինձ «գու» չասել.  
Դա անախորժ է ինձ համար:

**ԶՅԱՐՄԿԻ.**—Դէ լաւ: Խսկապէս ասած՝ խղճում եմ ձեզ:  
Դուք ինձ շատ էք հետաքրքրում ձեր թախիծով, իշխանութիւն,  
ոյժ և հզօրութիւն ձեռք բերելու ձեր ձգտումով... Ամենից աւելի  
հետաքրքրականն այն է, որ ձեր ամբողջ կեանքի ընթացքում  
ձգտել էք հասնել այն հաստատուն, գոռող ցնորքին, որ ոչ սահ-  
ման է ճանաչում, ոչ խոչընդոտ, բայց ընտրել էք ձեզ համար մի  
մարդ, որ ընաւորութեամբ մեղմ է մոմի նման և զգայուն՝ որպէս  
փայփայուած, երես առած մի մանուկ:

**ՕԼԳԱ.**—(Նրան ընդհատում է): Միայն մի թախիծ, միայն մի  
ծարաւ եմ ճանաչում ես. Դա գեղեցկութեան ծարաւն է... Կարող  
ես երկակայել, թէ որքան անախորժ է ինձ համար, որ պիտի  
դիպչեմ մի այնպիսի կեղպոտ անձի...

**ԶՅԱՐՄԿԻ.**—Ինչպիսին եմ: Հա-հա-հա: Ինչպէս լաւ էք  
կարողանում գուռը ցոյց տալ մարդկանց, գուրս ձգել: Հակա-  
ռակ ցանկութեանս՝ գդբախտաբար գեռ մի քանի բոպէ էլ պիտի  
զբաղեցնեմ ձեզ իմ խօսակցութեամբ: (Լուրջ): Այստեղ մնալու ես  
լիակատար իրաւունք ունեմ, իրաւունք և պարտականութիւն:

**ՕԼԳԱ.**—Որպէս զի վրէժինդիր լինես Ելենայի համար: Օ՝

Աստուած իմ: Որքան կեղծաւոր ու ստախօս է այդ խիղճը:  
ԶԶԱՐՄԿԻ.—Այդ էլ լաւ է առուած: Ես չգիտէի, որ դուք կարող էք նոյն իսկ այդպիսի խոր մտքեր արտայայտել. բայց, ներեցէք, ես չեմ գնալ, մինչև որ...

#### 4) ՆՐԱՆՔ ԵՒ ՄԼԻՑԿԻ

ՄԼԻՑԿԻ.—(Յանկար ներս է զալիս, ուշը գրեթէ կորցրած, աչքերը սեւուած Զջարսկու վրայ):

ՕԼԳԱ.—(Անհանգիստ): Ի՞նչ կայ, Ստեփան...

ՄԼԻՑԿԻ.—(Մի ինչոր բանի է ման զալիս): Ոչինչ...ոչինչ. ծխախոտ հմ ուզում. չգիտեմ՝ որտեղ եմ գրել:

ԶԶԱՐՄԿԻ.—(Բարեհոգութեամբ): Աւելի լաւ է չծխել, քանի որ գլուխդ ցաւում է:

ՄԼԻՑԿԻ.—(Անհանգիստ): Հը... Քաղաքում ի՞նչ նոր բան կայ: Դու այսօր տարօրինակ տեսք ունես. աչքերդ շարունակ շարժում են...

ԶԶԱՐՄԿԻ.—Ես վաղուց եմ նկատել, որ հալածման մասնիայի ախտով ես տանջուում:

ՄԼԻՑԿԻ.—Քեզ, թանկագին բարեկամս, քեզ, միայն քեզ եմ ես դրանով պարտական: (Նրան զլուխ է տալիս եւ զուրս զնում: Առութիւն):

#### 5) ՄԻԵԽՆՈՅՆ ԱՆՁԻՆՔ, ԲԱՑԻ ՄԼԻՑԿՈՒՅՑ

ՕԼԳԱ.—Վերջապէս Երբ բարի կը լինէք ինձ առանձին թողւնելու:

ԶԶԱՐՄԿԻ.—(Կատաղաբար): Երբ որ ինձ հաճելի կը լինի դա:

ՕԼԳԱ.—(Տեղից վեր է կենում): Խելագարուել էք, ի՞նչ է: Ի՞նչ էք սպասում, ի՞նչ էք ուզում ինձանից:

ԶԶԱՐՄԿԻ.—Թիչ համբերութիւն:

ՕԼԳԱ.—Սպասնում էք ինձ:

ԶԶԱՐՄԿԻ.—Երբէք: Միայն կը ցանկանայի իմաստ, թէ վախկոտ, խորամանկ և կեղծաւոր խիղճն արդեօք կարող է փըշը բել յառաջադիմութեան և լուսաւորութեան ուսհվիրայ հանդիսացնդ մարդկանց երջանկութիւնը:

ՕԼԳԱ.—(Հպարտ ատելութեամբ): Լսեցէք: Ժամանակով խղճում էի ձեզ: Զգում էի, որ Աս եմ եղել ձեր տանջանքների պատճառը, և տանջում էի ձեզ հետ միասին... Ուզում էի ուղղակի ձեր վասների փոխարէնը հատուցանել: Եւ միայն... մի քիչ սէր, սիմիայն մի քիչ...

ԶԶԱՐՄԿԻ.—Բայց դու մի հրէշաւոր ծաղրածու ես. հէ-հէ-հէ: Ես ձեզ սիրում էի, իսկ դուք աշխատում էիք ինձ այդ սիրուց բժշկելու... Միթէ ինձ ասել ես թէկուղ մի անգամ, թէ անյոյս կերպով հմ քեզ սիրում... Միթէ ինձ հետ միասին մութ կարինէտում շամպանիս գինու մօտ չես նստել. միթէ չէիր թոյլ տալիս, որ ձեռքերի վրայ տանեմ քեզ մինչև երրորդ յարկը, արձակեմ մազերդ և համբուրեմ: Դու միշտ թողնում էիր ինձ համար մի որևէ փոքրիկ ելք և, մինչև անգամ, երբ, իրօք, ամեն բան վերջացած էր, պարզում էիր ինձ քո մատիկը:

ՕԼԳԱ.—(Ծաղրաբար): Իսկ դու այնքան յիմար էիր, որ բըռնում էիր ամբողջ ձեռքս... հա-հա-հա, որքան անտաշ ես:

ԶԶԱՐՄԿԻ.—(Ծաղրի վրայ ուշադրութիւն զարձնելով): Մի անգամ հեռացայ քեղանից՝ ուղղակի վիրաւորանք նետելով երեսդ ի վեր. բայց հետևեալ օրը ետկիցս մարդ էիր ուղարկել: Ես խոյս էի տալիս քեղանից, իսկ դու միշտ որոնում, գտնում և քարշ էիր տալիս ինձ քո ետկից, թունաւորում, պատառ-պատառ դուրս էիր քաշում հոգիս:

ՕԼԳԱ.—(Զարմանքից ապշած): Եւ այս փուչ մարդն իմ խըդալս, իմ համականեցու այսպէս է հասկացել: (Ատելութեամբ): Դա, իրօք, հրաշալի է... ինչտ չես հանգիստ կերպով արտասանում մի սարսափելի և լալկան բալլազա այն հարօնացուի մասին, ուրին իմ պատճառով թողել ես: Զէ որ դու ինքդ էլ մի այնպիսի ելենա ունէիր:

ԶԶԱՐՄԿԻ.—(Տեղից ցատկում է, ամբողջ մարմնով դողալով): Լոի՛՛:

ՕԼԳԱ.—(Նիծակում է աւելի եւ աւելի բարձրածախն): Որպիսի տեսարան: Զջարուկին բարկացել է: Նա էլ սակայն կարող է զայրանալ: Հա-հա-հա: Մի անգամ պատճում էիր, թէ ինչպէս գողացել ես մտերիմ բարեկամիդ փողերը, որպէսզի սլանաս, գաս իմ ետելցից: Մոռացել ես այդ պատճութիւնդ:

ԶԶԱՐՄԿԻ.—(Մօտենում է նրան):

ՕԼԳԱ.—(Կանգ է առնում նրա առջև): Հը... պարոն Զջարսկի, ուրիշ ի՞նչ է հարկաւոր ձեզ:

ԶԶԱՐՄԿԻ.—(Իրեն տիրապետում է, ատելութեամբ): Զարմանում

Եմ ձեզ վրայ: Դուք իրոք չափազանց համարձակ էք:

ՕլքԱ.—(Խորին ատելութեամբ): Լսեցէք: Կամենում էք վրէժ լուծել: Well: (Լաւ): Բայց, գուցէ, այդ ձեռնարկութիւնը,—չէ՞ որ ձեզ համար ամեն ինչ ձեռնարկութիւն է,—կարող է փոխադարձ համաձայնութեամբ վերջանալ: Թերևս ցանկանում էք, որ հատուցանեմ ձեր վնասները: Ինձ չաղողուց սիրոյ քնքոյշ զգացումով հատուցանել այդ վնասները: Գուցէ այժմ փողով կարելի լինի: Բաւականին հարուստ եմ: Որքան էք ուզում: Մեծ գումարից ըսկ-սեցէք...

ԶԶԱՐՍԿԻ. — (Ուրախ ծիծաղում է): Չափազանց սրամիտ էք:

ՕլքԱ.—Ուրեմն փող չէ՞ք կամենում: Ուրախալի երեսիթ է դա: Բայց և այնպէս ուզում էք վրէժ առնել: Դէ՛, ինդրեմ: Վը-րէժ առէք:

ԶԶԱՐՍԿԻ. — (Մտախոնութեան մէջ է ընկնում): Գիտէ՞ք, այդ ամբողջ կոմեղիան արդէն յոգնեցրել չարչարել է ինձ: Արդէն վը-րէժս մասամբ առել եմ: Որքան անհանգիստանում և յուզում էք խեղճ Ստեփանի վերաբերմածք... Սակայն պաշտպանում էք մի արդէն տանուլ տուած գործ... Ելենան կը սպանէ նրան... Մլից-կին գուցէ մոռանար ելենային, եթէ ձեզ հետ ապրելով՝ երջան-կութեան գէթ մի նշոյլ գտնէր:

ՕլքԱ.—Շարունակեցէք, շարունակեցէք մինչև վերջը:

ԶԶԱՐՍԿԻ. — Սակայն Մլիցկին այդ նշոյլը չի գտնիլ: Աւազ: Նա չի կարող իր մէջ ոչնչացնել ուրախ զգացումը, իսկ այդ բղ-դացումը կնոջից մաքրութիւն է պահանջում:

ՕլքԱ.—Խիստ ափսոսում եմ, որ չեմ կարող հրամայել, որ-պէսզի ձեզ գուրս ցցեն:

ԶԶԱՐՍԿԻ. — Այդպիսով բանը կարող էր շատ վատ վերջա-նալ: Սակայն իրաւացի էք: Դորձն իր վախճանին հասցնենք: Եւ այդպէս՝ նախ ամեն ինչ այնպէս եմ արել, որ Մլիցկին երբէք չի մոռանալ իր երջանիկ, գուցէ և իրենից աւելի երջանիկ նախորդ-ներին:

ՕլքԱ.—(Ոժից ընկնելով): Է՞լ ինչ էք կամենում:

ԶԶԱՐՍԿԻ. — Սակայն անկարելի է այս բոլորի վրայ վստա-հել: Նրա սնափառութիւնը և թուլութիւնը կարող էին յաղթել արուի զգացմանը, և այն ժամանակ կարող էիք երջանկանալ միասին... Կը նշանակէ՝ մնում է խիղճը: Իսկ Մլիցկու խիղճ՝ հիւանդ, ամբողջապէս ժահրուտած վէրք է:

ՕլքԱ.—Յետո՞յ յի՞նչ:

ԶԶԱՐՍԿԻ. — Իսկոյն: Որպէսզի ամեն ինչ հասկանալի լի-նի ձեզ համար, հարկ եմ համարում խոստովանուել, որ կեանքումս չեմ ճանաչել որևէ մէկին, որ ելենայի պէս խորն ազդէր իմ սրտի վրայ... Նրա գժբախտութեան մէջ գուք երկուսդէլ մեղաւոր էք... Բայց գուք երկուսդէլ էլ լուսաւորուած մարդիկ էք. կը նշանակէ՝ կարող էիք մոռանալ նրան, և այն ժամանակ, ով գիտէ, գուցէ և երջանիկ լինէիք... Բայց ես թոյլ չեմ տալ, որ մոռանաք: Ես ե-կել եմ վրէժինդիք լինելու թէ ելենայի և թէ ինձ համար: Մլից-կին շուտով կիմանայ:

ՕլքԱ.—(Սաստիկ յուզումով): Ի՞նչ: (Լոռութիւն):

ԶԶԱՐՍԿԻ. — (Մտածմունքի մէջ է ընկնում):

ՕլքԱ.—(Բոլորովին լրուած ձայնով): Դու եկել ես, որպէս զի Մլիցկուն յայտնե՞ս այդ բոլորը:

ԶԶԱՐՍԿԻ. — Այն:

ՕլքԱ.—(Յանկար ցատկում է): Եւ ոչ մի բան չէ կարող գրանից յետ կանգնեցնել քեզ: Ոչ մի բան...

ԶԶԱՐՍԿԻ. — Ոչ մի բան... (Լոռութիւն):

ՕլքԱ.—(Յանզով անկար): Մի ասիլ նրան այդ բանը: Այժմ մի ասիլ... Աղաչում, խնդրում եմ քեզ, ի սէր Աստուծոյ: Մի ա-սիլ նրան այդ ամենը: Ինչ որ կամենում ես, արա ինձ, միայն թէ հիմա մի ասիլ Մլիցկուն այդ բանը: Յետոյ: Յետոյ: Վաղը...

ԶԶԱՐՍԿԻ. — (Լոռում է):

ՕլքԱ.—(Ենջում է): Ինչ որ կամենաս, կը տամ քեզ, կը տամ ամեն ինչ, եթէ ցանկանաս՝ նոյն իսկ կը թողնեմ Մլիցկուն: Բայց այժմ մի տանջիլ նրան: Այսօր կը սպանէ նրան այդ յայտ-նութիւնը:

ԶԶԱՐՍԿԻ. — Մլիցկին անգժարար սպանեց ելենային, իսկ դու՞՝ ինձ:

ՕլքԱ.—Լաւ, լաւ: Եթէ այդպէս է, ապա հաղորդիք նրան ամեն ինչ: Կը տեսնենք՝ ով է աւելի ուժեղ, ես թէ ելենան: (Կանչում է): Ստեփան, Ստեփան...

## 6) ՄԻԵՒՆՈՅՆ ԱՆՁԻՆՔ ԵՒ ՄԼԻՑԿԻ

ՄԼԻՑԿԻ. — (Ներս է գալիս գունատ, օրօրուելով, կիսալսելազար):

ՕլքԱ.—(Ուժզին): Նայիր: Նայիր այս մարդուն: Սա իմ ստրուկն է եղել, իմ գամփուը: Ճիշշտ է, որ նա քեզ վրայ իշխում

է: Ճիշտ է, որ խախտել է ինձ նկատմամբ ուսեցածդ հաւատը՝ Ճիշտ է, որ Ելենային երբէք չէիր ձգիլ, եթէ ես այսպէս շուտ չգայի: Ճիշտ է, համ:

**ՄԼԻՑԿԻ.**—Սնւտ է խօսում լիրք անպիտանը, սնւտ: Դնւրս: Դնւրս:

**ԶՉԱՐՍԿԻ.**—(Հանդիստ կերպով նայում է նրանց վրայ): Զեմ հասկանում, թէ ինչու էք յուղում: Ստեփան, քեզ բոլորովին սագ չի գալիս այդ հերոսական պողան:

**ՕՂԱԿ.**—(Մլիցկուն): Թոյլ մի տալ, որ քեզ վերառոքէ:

**ՄԼԻՑԿԻ.**—(Չղային դողոցով պարզում է ձեռքը, մի բոպէ յետոյ դրժուարութեամբ): Դնւրս այստեղից...

**ԶՉԱՐՍԿԻ.**—Գուցէ նախ և առաջ կամենայիր իմանալ, թէ ինչ է պատահել Ելենային: (Մլիցկի նայում է նրան մոլորուած աչքերով):

**ՕՂԱԿ.**—Ստեփան, գնա: Գնա: Աղաչում եմ քեզ, գնա: Թնդ նրան:

**ՄԼԻՑԿԻ.**—Սպասիր, սպասիր: Նախ թող ասէ: Նա մի ինչու սպասակելի բան պիտի ասէ: (Գոռում է Զջարսկուն): Ասա: Ասա...

**ՕՂԱԿ.**—Թոյլ մի տալ, որ նա յաղթանակէ... (Բռնում է Մլիցկու ձեռքը): Գնա, ևս ինքս կասեմ քեզ: Գնա, գնա:

**ՄԼԻՑԿԻ.**—(Ուժին թափով նրա ձեռքից դուրս դալույ խոպոտ ձայնով գոյում է): Ասիծուած դահիճ, ասա վերջապէս:

**ՕՂԱԿ.**—(Ուժին): Ես ինքս կասեմ քեզ: Ելենան ինքնասպանութիւն է գործել:

**ԶՉԱՐՍԿԻ.**—Զուրն է ընկել, խեղզուել:

**ՄԼԻՑԿԻ.**—(Չհասկանալով): Խեղդուել է: Ելենան խեղդուել է:

**ԶՉԱՐՍԿԻ.**—Այն, խեղդուել է:

**ՄԼԻՑԿԻ.**—(Ինքնամուացութեան մէջ նայում է մերթ Օղային, մերթ Զջարսկուն, յետոյ յարձակում է վերջինիս վրայ): Սնւտ ես ասում: Սնւտ: Ասա, որ ստում ես:

**ԶՉԱՐՍԿԻ.**—Շուտով ինքտ կիմանաս: Դիմակնատանը ձեր հասցէն եմ տուել: Նրա գիտեն այստեղ կը բերեն...

**ՄԼԻՑԿԻ.**—Ի՞նչ է ասում այս սատանան: Իսկոյն այստեղ կը բերեն նրան:

**ԶՉԱՐՍԿԻ.**—Զէ որ հարկաւոր է թաղել նրան:

**ՄԼԻՑԿԻ.**—Հրամայել ես, որ նրան այստեղ բերեն: (Արսափանար): Այստեղ: Այստեղ: (Կատաղում է եւ գոռում): Դնւրս: Դնւրս: Ես քեզ... ես... (Բռունցըները սեղմած կանգնում է):

**ԶՉԱՐՍԿԻ.**—(Օլգային): Լսեցէք: Մեր հաշիւները դեռ չեն վերջացած: (Դուրս է զնում: Լուսթիւն):

**ՄԼԻՑԿԻ.**—(Կանգնում է սենեակի մէջտեղ եւ ձեռքերը կոտրում):

**ՕՂԱԿ.**—(Ապած մօտենում է տատին, դէմքը բոլորովին սառը, անզգայացած երկար նայում է միւս երկուսին):

**ՄԼԻՑԿԻ.**—(Ճուռ է զալիս եւ մօտենում նրան): Ճշմարիտ է, ճիշտ է այդ լուրը:

**ՕՂԱԿ.**—(Յածր): Այո, ճիշտ է...

**ՄԼԻՑԿԻ.**—(Ինքնամուացութեան մէջ): Աշ, ուրեմն ճիշտ է: Հելան չկամ: (Ընկնում է աթոռի վրայ, մի վայրկեանից յետոյ վեր է կենում, մօտենում է Օլգային): Մենք տանջեցինք Հելային, սպանեցինք: Մենք... ես և դու... Դնւ էլ... Դնւ էլ... (Ծիծաղում է վայրենի բրդիցով): Քեզ համար տանջեցի նրան, համամահա: Երջանկութեան համար... մեր երջանկութեան համար... Սպանեցի... համամահա: Երջանկութեան համար:

**ՕՂԱԿ.**—(Ատելութեամբ նայում է նրան, ապա ցնցող ծիծաղով ծիծաղում):

**ՄԼԻՑԿԻ.**—(Կատուի նման գողէ-գող մօտենում է նրան):

**ՕՂԱԿ.**—(Երկիւլից յետ-յետ է զնում: Այդ ժամանակ դրսից ակմուկ է լաւում):

**ՄԼԻՑԿԻ.**—(Չգում, ուղղում է ու ահեղ սարսափով բռնում Օլգային): Բերում են նրան, բերում: Մի թողնիլ: Կողպիր դուռը: Մի թողնիլ:

**ՕՂԱԿ.**—(Սարսափանար, ամբողջ մարմնով դողում է: Դուռը սաստիկ ծնծում են: Օլգան եւ Մլիցկին սարսափած յետ են նահանջում: Մի բոէտի լուռթիւն է տիրում: Գուռը նորից ծնծում են):

**ՄԼԻՑԿԻ.**—(Վայրենի ճայնով գոռում է): Զեմ թողնիլ: Զեմ թողնիլ... (Նետում է դէպի գոները):

ՇԱՐՈՒՅԿԻՈՒՄ է ԲԱԺԱՆՈՐԴՄԱԹԻՒՆԸ 1907 թ.

## Յ Ա Խ Շ Ս Ր Ա Ջ

բաներական—գրական—գիտարևուսական պատմեցակաղ Երկշարարեցի

Այս տարի տառը է 18 հաւաք 100-ից աւելի պատկերներով և 9 հատ ինքուրոյն և թարգմանական պիէսներ, որոնք գլուխարտար նուիրուած պէտք է լիսնի զաւառական բաների կարգավորութեամբ ամիսն առուած ամիսն առորհութ շարժնակալութեամբ կընդունուի և նկատողութեամբ անդամաններին աշանձին մինչք սահանձին մինչք դարձելու, հաւաքագրութեամբ կողմից, Այս մասնին մինչք սահանձին մինչք դարձելու, հաւաքագրութեամբ լինելով որ զաւառական քաղաքների և գրւդերի ներկայացումներին կուլտուրական մեջ գրական քաղաքահանութեամբ ու գերմանական գրականութեամբ:

Տարի է վերապահուած 6 թ.—16 ֆրանք կամ 3 դոլար՝ Բաժանորդացարքի պատճեններում է 1) խմբագրատանը (Սերգիևսկայա № 3), որ բաց է սուսօսանն 1—2 և 6—7; 2) «Գուտառենիրդ» զբայխանութուն, 3) «Փարոս» կէօսկում, (Երևանանան հրապարակութեամբ); Բաժնեկինը կարելի է վճարել մաս ու մաս՝ ոկզիրց 2 ր. և առաջ իւրաքանչւր մոլոր լուս առանձնանի լինուածները կամ շատ անորդները: Եուր բաժանորդները կամ շատ անորդները, մինչ մուտքի, մինչ բայց բայց անորդները կամ շատ անորդները:

Օտարաբաղաջանակառը պէտք է դիմումն խմբագրատանը՝ Տիֆլիս, Սերգևսկայ 3, րедакցիա սՄարտ»

Լամ Տիֆլիս, Rédaction du journal «Houchcharar».



VENETIAE LIBRARIAE UNIVERSITATIS VENETIENSIS 1801 A.

LIBRARY OF THE UNIVERSITY OF VENICE

BIBLIOTHECA UNIVERSITATIS VENETIENSIS LIBRARY OF THE UNIVERSITY OF VENICE

UNIVERSITY LIBRARY OF VENICE  
BIBLIOTHECA UNIVERSITATIS VENETIENSIS  
LIBRARY OF THE UNIVERSITY OF VENICE

UNIVERSITY LIBRARY OF VENICE  
BIBLIOTHECA UNIVERSITATIS VENETIENSIS  
LIBRARY OF THE UNIVERSITY OF VENICE

UNIVERSITY LIBRARY OF VENICE  
BIBLIOTHECA UNIVERSITATIS VENETIENSIS  
LIBRARY OF THE UNIVERSITY OF VENICE

«ՅՈՒՆԱՍՏԱՆ»-ի յաւելուածներն են

- 1 ԱԴԱՄ ՈՒ ԵԽՈ. Կոմ. 2 գործ. Եակովլեի, թարգմանութիւն  
Ա. Վրոյրի. . . . . 30 կ.  
2 ԵՐԶԱԿԱՌՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ. Դրամա 3 գործ. Պշեռըշևկու,  
թարգմ. Ա. Շխեանցի. . . . . 50 կ.
- 

Մեծ դիւրութիւն է դերակատարների համար, եթէ  
նրանք փոխանակ արտագրուած դերերի պիեսան ունենան  
իրենց ձեռքին՝ դերերը սովորելու համար. ուստի մեր այն  
բաժանորդները, որոնք կը կամենան աւելորդ օրինակներ  
ձեռք բերել՝ ներկայացնելու համար, պէտք է դիմեն խըմ-  
բագրութեանս: 2—3 դերակատարի դերեր արտագրել տալուց  
աւելի ձեռնտու է պատրաստ պիեսը ձեռքին ունենալը:



ԳԻՆ Է 50 ԿՈՊ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0321129

16.058

891.85  
7-72